Երեքշաբթի
28 փետրվարի 2023թ.
№ 4 (592)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Հայրենիքը՝ սիրաշատ մայր, չունի ավելի սիրելի զավակ, քան զինվորը:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Հայոց Արցախի բլոկադան շարունակվում է. աշխարհին իբր դատապարտում է, բայց ոչ մի գործնական քայլ

Հայոց խորհրդարանականները Սյունիքի արևելյան սահմանագոտում

Փետրվարի 18-ին Գորիս էին ժամանել Ազգային ժողովի մի խումբ պատգամավորներ՝ Արսեն Թորոսյան, Վաղարշակ Հակոբյան, Դավիթ Դանիելյան, Նարեկ Գրիգորյան: Այցելության նպատակն էր տեղում՝ անմիջաբար, ծանոթանալ Սյունիքի արևելյան սահմանների պաշտպանական համակարգին, լսել սահմանապահ բնակավայրերի բնակիչների մտահոգությունները:

Սյունիքից ԱԺ պատգամավոր Դավիթ Դանիելյանը, ով նախաձեռնել էր պատգամավորների շրջայցը, նախօրեին հանդիպում էր ունեցել Հատուկ նշանակության բանակային կորպուսի նորանշանակ հրամանատար, գնդապետ Արմեն Գյոզալյանի հետ, ծանոթացել սահմանամերձի օպերատիվ կացությանը և քննարկել պատգամավորների՝ առաջնագիծ մեկնելուն առնչվող հարցեր: Նույն օրը պատգամավորն այցելել է «Զանգերի կենտրոն» ընկերություն: 2022-ի մայիսին հիմնադրված այդ ընկերությունը, որ տեղաբաշխված է «Գորիս» հյուրանոցում, արդեն իսկ 28 աշխատատեղ ունի Գորիսում, 16-ը՝ Կապանում, 6-ը՝ Սիսիանում: Ընկերության հիմնադիր Վախթանգ Հովսեփյանը ներկայացրեց առաջիկա ծրագրերը, մարզում նոր աշխատատեղեր հիմնելու իրենց մտադրությունը:

Մինչև սահմանամերձ մեկնելը Դավիթ Դանիելյանը և Նարեկ Գրիգորյանն այցելեցին Գորիսի պետական քոլեջ, հանդիպեցին կրթօջախի դասախոսական անձնակազմի հետ, ծանոթացան հաստատության գրեթե մեկդարյա փառավոր ուղուն, քննարկեցին ուսումնական հաստատության առջև ծառացած հիմնախնդիրները: Այնուհետև խորհրդարանականները՝ ամբողջ կազմով, մեկնեցին Գորիս-Ստեփանակերտ մայրուղուն կից՝ Խնձորեսկի խաչմերուկի մերձակայքի շինհրապարակ, որտեղ գործարար Սենիկ Ջուլհակյանի նախաձեռնությամբ կառուցվում է արտադրական ու սպասարկման համալիր, որի շահագործման արդյունքում կստեղծվի մինչև 150 աշխատատեղ: Համալիրը, որի գործարկումն ակնկալվում է առաջիկա ամռանը, կդառնա նաև տարածաշրջանում արտադրվող գյուղմթերքների իրացման կենտրոն: Ի դեպ, այդ վայրի հետ կապված ավանդագրույցներ կան՝ հին մատյաններից մեզ հասած, որ կիետաքրքրի նաև զբոսաշրջիկներին:

Խորհրդարանականների հաջորդ կանգառը Տեղ գյուղն էր, որտեղ էլ համայնքի ղեկավար Դավիթ Ղուլունցի հետ քննարկվել են խոշորացված համայնքի բնակավայրերի իրավիճակն և առկա խնդիրները, նաև դրանց լուծման ուղիները: Տեղ համայնքն Ադրբեջանի հետ ունի 63 կմ սահման. պատահական չէ, որ բնակիչների գլխավոր մտահոգությունը կապված է անվտանգության համակարգի հետ:

Պատգամավորական խմբի առաքելության հիմնական նպատակը, ինչպես նշեցինք, հայ-ադրբեջանական սահմանի իրավիճակին, ինչպես և զինվորների սոցիալ-կենցաղային պայմաններին ծանոթանալն էր, ինչի համար էլ եղան առաջնագծի մի շարք դիրքերում: Այդ ընթացքում պատգամավորները հանդիպումներ են ունեցել նաև համայնքի տարածքում գտնվող աշխարհազորային ջոկատների, ԵԿՄ ստորաբաժանումների հետ:

Վերջում պատգամավորները հանդիպումներ ունեցան համայնքի բնակիչների հետ և ունկնդիր եղան գյուղացիներին մտահոգող հարցերին:

Ազգային ժողովի պատգամավորներին ուղեկցում էր ԵԿՄ Սյունիքի մասնաճյուղի նախագահ Մելիքսեթ Պողոսյանը:

Անշուշտ, գնահատելի է Ազգային ժողովի պատգամավորների այդ նախաձեռնությունը: Դա, ըստ էության, Սյունիքի իրավիճակին և սահմանամերձի մտահոգություններին ծանոթանալու, առկա խնդիրները երկրի ղեկավարությանը ներկայացնելու յուրօրինակ աշխատանք է, ինչը, կարծում ենք, շարունակական պետք է լինի և ունենա գործնական արդյունքներ: Սահմանապահ գյուղերի բնակիչները հույս հայտնեցին, որ իրենց բարձրացրած հարցերը կընդհանրացվեն, և դրանց վրա կիրավիրվի հանրապետության պատկան մարմինների ուշադրությունը:

Յ.Գ.** Գորիսից մայրաքաղաք վերադառնալուց առաջ պատգամավոր Արսեն Թորոսյանը զրույց ունեցավ «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանի հետ: Հարցազրույցի տեքստը՝ էջ 4-ում:* ***II

Ադրբեջանը պարտավոր է ապահովել Լաչինի միջանցքով անխափան տեղաշարժը երկու ուղղությամբ

Արդարադատության միջազգային դատարանը հրապարակեց Լաչինի միջանցքի ապաշրջափակման վերաբերյալ ժամանակավոր միջոց կիրառելու Հայաստանի պահանջի մասին որոշումը: Այսպիսով՝ դատարանը եզրակացնում է, որ Ադրբեջանը պարտավոր է իր՝ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների համաձայն՝ ձեռնարկել իրենից կախված բոլոր միջոցները, որպեսզի ապահովի անձանց, տրանսպորտային միջոցների և բեռների անխափան տեղաշարժը Լաչինի միջանցքով երկու ուղղությամբ: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ որոշումը հրապարակվեց փետրվարի 22-ին:

Դատարանը նախ հիշեցրեց, որ 2021-ի դեկտեմբերի 1-ի որոշմամբ դատարանը կիրառել է հետևյալ ժամանակավոր միջոցները. *«Ադրբեջանը պարտավոր է միջազգային կոնվենցիայի համաձայն իր պարտավորությունների ներքո ձեռնպահ մնալ բռնությունից և մարմնական վնաս պատճառելուց բոլոր այն անձանց, որոնք գերեվարվել են 2020-ի հակամարտության առնչությամբ և մնում են ազատությունից զրկված, ապահովել օրենքի առաջ նրանց հավասարությունն ու անվտանգությունը: Միջոցներ կիրառել կանխելու ռասայական խտրականության և ատելության սերմանումը, այդ թվում պետական կառույցների, պաշտոնատար անձանց կողմից՝ մասնավորապես հայերի նկատմամբ...»*:

Հայաստանը 2022-ի դեկտեմբերի 28-ին նոր պահանջ է ներկայացրել՝ պայմանական միջոցների կիրառության վերաբերյալ: Հայաստանը նշել է, որ Ադրբեջանը կազմակերպել է ԼՂ-ում 120 հազար հայազգի անձանց՝ արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհի արգելափակումը: Հայաստանը պահանջել է, որ դատարանը կիրառի հետևյալ երկու ժամանակավոր միջոցները՝ Ադրբեջանը պետք է դադարի աջակցել ու կազմակերպել ենթադրյալ բողոքի ցույցը, որով արգելափակվել է Լաչինի միջանցքով անխափան տեղաշարժը և Ադրբեջանը պարտավոր է ապահովել անխափան ազատ տեղաշարժը բոլոր անձանց, տրանսպորտային միջոցների և բեռների համար Լաչինի միջանցքի երկայնքով երկու ուղղություններով:

Դատավորը նշեց՝ դատարանը նկատում է, որ 2022 թվականի դեկտեմբերի 12-ից ԼՂ-ի և ՀՀ-ի միջև կապը Լաչինի միջանցքով խաթարված է: Դատարանը արձանագրում է, որ այս իրավիճակի հետևանքով մի շարք հետևանքներ են ծագել, և, որ հետևանքները կրող անձինք շարունակում են մինչև այս այդ ազդեցություն կրել: Տեղեկությունների համաձայն՝ նաև խոչընդոտվել է ԼՂ կենսական

Շարունակությունը՝ էջ 8

Հանքարդյունաբերության արդի մարտահրավերները և չիրացվող ներուժը

Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանը՝ լրագրողների հետ հանդիպմանն ամփոփել է 2022 թվականը, ներկայացրել ոլորտի արդի մարտահրավերները և տեսակարար կշիռը բյուջետային մուտքերի կառուցվածքում: Հանդիպման առանցքային հատվածները՝ ստորև:

Մարտահրավերները

Այն մարտահրավերները, որոնք ունենք ոլորտում և ընդհանրապես տնտեսության մեջ, մեծամասամբ սկսել են 2022 թվականից: Ամենածանր և ամենադժվար գործոնը դրամի ամրապնդումն է: Ոլորտը, ինչպես նաև մնացած արտահանող կազմակերպությունները, շատ ծանր դրության մեջ են հայտնվել, քանի որ կազմակերպություններից շատերի ծախսային մասը դրամային է, իսկ հասույթը՝ արտարժույթով: Սա բերել է նրան, որ ինքնարժեքն աճել է, և ոլորտի շատ կազմակերպություններ փաստացի վնասով են աշխատում:

Այս հարցը մենք մի քանի անգամ ներկայացրել ենք կառավարությանը: Ցավոք, խնդիրն իրականում շատ ավելի խորքային է: Եթե Կենտրոնական բանկը քայլեր ձեռնարկի և դրամը թուլացնի, դա էլ կարող է բերել հակառակ իրողության: Այսինքն՝ հասկանում ենք, որ ուղղակիորեն այս խնդիրը շատ դժվար է լուծել: Մենք մի քանի առաջարկ ենք ներկայացրել կառավարությանը, թե դրամի այսպիսի ամուր կուրսը պահպանվելու դեպքում ինչ քայլեր կարելի է ձեռնարկել, որ ոլորտը և արտահանող կազմակերպությունները չունենան այդ խնդիրները:

Նախորդ տարի ոլորտում ևս երկու խնդիր ունեինք, բայց այս պահի դրությամբ դրանք արդեն չկան: Մեկն աննախադեպ արտահանման տուրքն էր, որը, մեր կարծիքով, տնտեսապես հիմնավորված չէր, մյուսը՝ հիմնական մետաղների գների անկումը: Այժմ արտահանման տուրքը չկա, իսկ մետաղների գներն արդեն վերականգնվել են:

Արտահանման ծավալները

2021թ. համեմատ 2022-ին հանքարդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է եղել երկրորդ խոշոր արտադրողի՝ Թեղուտի հանքի չաշխատելով: Բայց մնացած բոլոր արտադրողներն ունեցել են աճ: ԶՊՄԿ-ն մոտ 20% ավելի արտադրանք է տվել և արտահանել: Մնացած բոլոր կազմակերպությունները ևս արտահանման ծավալների խնդիրներ չեն ունեցել:

Ամուլսարը և չիրացվող ներուժը

Հայաստանում կա մեկ միջազգային մակարդակի խոշոր հանքագործական կազմակերպություն՝ ԶՊՄԿ-ը, երկրորդ այդպիսի էական կազմակերպությունը պետք է լիներ Ամուլսարի հանքը: Բայց այն, ինչ պատահեց Ամուլսարի հետ, շատ վատ էր: Արևմտյան միջազգային ներդրողները փորձում էին Հայաստանում սկսել մի մեծ նախագիծ, ինչը չստացվեց, չնայած նրանք ոչ մի օրենք չէին խախտել: Երբ խոսում ենք ԶՊՄԿ-ից, որի վճարած հարկերը շատ մեծ են, մի այդպիսի կորուստ վերջին 4-5 տարում ունենք Ամուլսարի դեպքում: Խոսքը հարյուր միլիոնավոր դոլարների չիրականացված մուտքի մասին է:

//

Սիսիան-Քաջարան և Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածի մրցույթին մասնակցել է 23 ընկերություն

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը ներկայացրեց, թե ինչ փուլում է գտնվում «Հյուսիս-հարավ» ճանապարհի շինարարությունը, տարբեր հատվածներում ինչ աշխատանքներ են իրականացվում այս պահին:

Սանոսյանն այս մասին խոսեց ԱԺ տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նիստում իր ելույթում:

«5 տրանշից է բաղկացած, որոնցից փաստացի միայն մեկն է, որ հիմա պատրաստ է: Դա Երևան-Արտաշատ, Երևան-Աշտարակ հատվածն է: Մյուս հատվածները տարբեր փուլերում են գտնվում: Հիմա շինարարական փուլում է Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի հատվածը (Տրանշ 3): Մի կտորը՝ Թալինից Լանջիկ հատվածն ավարտված է գրեթե ամբողջությամբ, ավելի շուտ հարակից աշխատանքներ են մնացել, քան բուն ճանապարհի վրա աշխատանքը: Շինարարության փուլում է Լանջիկից Գյումրի հատվածը, որը, կարծում ենք, այս տարի կավարտվի», – ասաց Սանոսյանը՝ հավելելով, որ եթե 2024-ին մնան որոշ աշխատանքներ, հիմնականում ասֆալտապատմանը չեն վերաբերի, այլ՝ հարակից աշխատանքներին:

Աշտարակից-Թալին հատվածը, որը շուրջ 42 կմ է, բաժանված է երկու կտորների՝ 8 կմ-անոց և 34: 8 կմ-անոց հատվածում շինարարություն է, 34-ում՝ մոտ 3 ամսվա ընթացքում կլինի շինարար: Նախարարը պարզաբանեց, որ դա այն հայտնի բարդ հատվածն է, որտեղ դատական վեճ կա իսպանական ընկերության հետ: *«Բազմաթիվ խնդիրներ կան: Բայց կարծես բոլորիս ջանքերի արդյունքում կարողացանք այդ բոլորին զուգահեռ նաև մրցութային գործընթաց տանել, մեկում ունենալ շինարար, մյուսում մոտ ժամանակներս կունենանք»,* – ասաց Սանոսյանը:

//

Տեղի է ունեցել Որոտան-Խոտ ավտոճանապարհի վերակառուցման աշխատանքների մասնագիտական հանձնաժողովի երկրորդ նիստը

Տեղի է ունեցել Որոտան-Խոտ ավտոճանապարհի վերակառուցման աշխատանքների ընթացքում 8-րդ կիլոմետրում գերխոնավացած լանջի փլուզման հետևանքով առաջացած խնդիրներն ուսումնասիրելու նպատակով ստեղծված մասնագիտական հանձնաժողովի երկրորդ նիստը:

Հանձնաժողովի կազմում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի, ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունների, Սյունիքի մարզպետարանի, Տաթև համայնքի, ճանապարհի վերակառուցումը նախագծած կազմակերպության, շինարարությունն իրականացնող ընկերության ներկայացուցիչներ:

Հանձնաժողովի անդամները եղել են շինհրապարակում, տեղում դիտարկել առկա խնդիրը: Դաշտային այցին հաջորդած մասնագիտական քննարկման ընթացքում արծարծվել են մի շարք հարցեր, տրվել են հանձնարարականներ՝ պարզելու գրունտների գերխոնավացման պատճառները:

Դիտարկվել է Որոտան բնակավայրի տարածքում ճանապարհը նոր ծրագրով կառուցելու հնարավորությունը: Քննարկվել են նաև այլ հարցեր:

Մասնագիտական բազմակողմանի հետազոտությունների արդյունքներն ունենալուց հետո կհստակեցվեն ճանապարհի տվյալ հատվածի վերակառուցման հետ կապված խնդիրները:

Նշենք, որ վերակառուցվող Որոտան-Խոտ 10.3կմ երկարությամբ ավտոճանապարհի մյուս հատվածներում այս պահին կատարվում են հողային աշխատանքներ:

//

Գևորգ Փարսյանը մասնակցել է «ԱՐԱՍ ԷՔՍՊՈ 2023» միջազգային ցուցահանդեսին

«Արաս» ազատ տնտեսական գոտու գործադիր տնօրեն, տնօրենների խորհրդի նախագահ, դոկտոր Մաջիդ Քիանիի հրավերով՝ փետրվարի 14-15-ը Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի գլխավորած պատվիրակությունը երկօրյա աշխատանքային այցով գտնվել է Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) Թավրիզ քաղաքում և մասնակցել 18 տարվա պատմություն ունեցող «Արաս» ազատ տնտեսական գոտու առաջին Էքսպո ցուցահանդեսի հանդիսավոր արարողությանը: Պատվիրակության կազմում ընդգրկված էին տարբեր ոլորտներ ներկայացնող տեղի գործարարները:

Համայնքի ղեկավարը պատվիրակության անդամների հետ շրջել է մեքենաշինության, շինարարության, գյուղատնտեսության, սննդի արդյունաբերության և մի շարք այլ ոլորտներ ներկայացնող տաղավարներում, ծանոթացել ցուցադրված ապրանքատեսականուն, զրուցել ցուցահանդեսի ղեկավար կազմի ներկայացուցիչների հետ: Տեղի են ունեցել նաև հանդիպումներ, որոնց ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ հետագա համագործակցության շուրջ: Այցի շրջանակներում պատվիրակությունը եղել է նաև պատմամշակութային վայրերում՝ Ջուլֆայի Սուրբ Ստեփանոս վանական համալիրում (9-րդ դար) և Թավրիզի կենտրոնական շուկայում:

//

Ի՞նչ դերակատարություն կունենա ԵՄ դիտորդական առաքելությունը Սյունիքի անվտանգության ապահովման գործում, և արդյո՞ք կունենա

2022 թ. դեկտեմբերի 27-ին ԵՄ բարձր ներկայացուցչին հասցեագրված նամակով ՀՀ արտգործնախարարը հրավիրել էր Եվրոպական Միությանը՝ Հայաստանում տեղակայելու քաղաքացիական առաքելություն:

2023 թ. հունվարի 23-ին՝ ԵՄ անդամ երկրների արտգործնախարարների հանդիպման ժամանակ որոշում ընդունվեց Հայաստանում Եվրոպական Միության առաքելություն գործուղելու մասին, որը կունենա գործունեության երկու տարվա մանդատ:

ԵՄ առաքելության անձնակազմը բաղկացած է մոտավորապես 100 հոգուց: Տարածված պաշտոնական տեղեկատվությունից կարելի է ենթադրել, որ նրանցից 50-ը զինված կլինեն: Եվրոպական դիտորդական առաքելության աշխատանքները մեկնարկել են փետրվարի 20-ին: Առաքելության օպերատիվ շտաբը տեղակայվել է Եղեգնաձոր քաղաքում: ԵՄ դիտորդական առաքելության հետ կապված հարցեր են ծագել նաև Սյունիքում, և դրանք պարզաբանելու համար զրույցի հրավիրեցինք ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի Իրանագիտության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Վարդան Ոսկանյանին:

– Պարոն Ոսկանյան, զրույցը սկսենք Արդարադատության միջազգային դատարանի փետրվարի 22-ի որոշմանն անդրադարձ կատարելով: Արդյո՞ք Հաագայի դատարանի որոշումը պարտադիր կատարման ենթակա է, և Ադրբեջանը Լաչինի միջանցքից հետ կկանչի «բնապահպաններին»:

– Անկեղծ ասած՝ իրավական հարթությունում չեմ կարող դրան գնահատական տալ, որովհետև մասնագիտական պատրաստվածությունս ուղղակի չի ների դա անել: Բայց կարևոր է նման որոշումների առկայությունը: Ըստ էության այդպիսի որոշումները ստեղծում են բավարար իրավական հիմք կամ նաև բավարար հասարակական տրամադրությունների հող՝ միջազգային ասպարեզում, որպեսզի շարունակենք պայքարն Արցախյան հիմնախնդրի լուծման ուղղությամբ, որի ամենաառաջնային բաղադրիչն այսօր Բերձորի միջանցքի խնդիրն է:

Որքանով Ադրբեջանն ուշադրություն կդարձնի դատարանի որոշմանը… Կարծում եմ՝ կփորձի խուսափել որոշման կատարումից, բայց, կրկնեմ, նման որոշումների, փաստաթղթերի առկայությունը նաև իրավական տիրույթում մեր դիրքերն ուժեղացնում են և հնարավորություն տալիս այլ գործիքակազմերի ներգրավմամբ լուծելու խնդիրները, որոնք Արցախի բնակչության համար կենսական նշանակություն ունեն:

– Հիմա՝ ԵՄ դիտորդական առաքելության մասին: Ե՛վ առաքելության ղեկավարը, և՛ Հայաստանի արտգործնախարարը հույս են հայտնում, որ առաքելությունը կարևոր ներդրում կունենա Ադրբեջանի հետ սահմանամերձ շրջաններում ապրող բնակչության անվտանգության ապահովման գործում: Արդյո՞ք հնարավոր է հռչակված այդ նպատակն իրականացնել գործնականում:

– Գործընթացը պետք է դիտարկել ավելի լայն կտրվածքով, իսկ դա նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման որոշակի բաղադրիչը, փաստորեն, պետք է իրականացվի դիտորդների կողմից:

Արդյո՞ք հնարավոր է 100 (բոլորովին անզեն կամ կիսով չափ զինված) դիտորդներով վերահսկել բավական ընդարձակ տարածքը: Կարծում եմ՝ ֆիզիկապես նույնիսկ դա անելն անհնարին է, հետևաբար՝ դիտորդական առաքելության ներկայությունը զուտ խորհրդանշական կգնահատեի, ոչ ավելին:

Ինչ վերաբերում է խնդրին, թե դիտորդները պետք է տեղեկատվություն փոխանցեն առկա իրավիճակի մասին… Բերվեց պատճառ՝ Ադրբեջանը մտավախություն ունի, որ

հայկական և ռուսական կողմերը համատեղ ջանքերով փորձում են ռևանշի դիմել: Բայց դա անելու համար չեմ կարծում, թե պարտադիր էր դիտորդական առաքելության ներկայությունը՝ հաշվի առնելով արդի տեխնիկական հնարավորությունները:

Մեկ այլ կարևոր հանգամանք, որի վրա կուզենայի ուշադրություն սևեռել. Հայաստանի Հանրապետությունն արդեն իսկ ունի անվտանգային մեխանիզմներ իր դաշնակցի՝ Ռուսաստանի Դաշնության հետ, և բոլոր հավելյալ մեխանիզմները, որոնք ստեղծվում են, պետք է կոչված լինեն փոխլրացնելու առկա բացերը, այլ ոչ թե փոխարինելու դրանց:

– Ինչպե՞ս եք պատկերացնում առաքելության դերակատարությունը Սյունիքում, երբ Ռուսաստանի Դաշնությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունը (ի սկզբանե) մերժելի քայլ են համարել ԵՄ դիտորդների հայաստանյան առաքելությունը: Առավել ևս, որ ՌԴ սահմանապահ կամ խաղաղապահ ուժերը մեր սահմանագոտու բազմաթիվ հատվածներում են:

– Տեսեք, Մոսկվայում լուրջ անհանգստություն կա այդ կապակցությամբ: Թեհրանը նույնպես, մեղմ ասած, խանդավառ չէ դիտորդական առաքելության ներկայությամբ:

Մեկ այլ կարևոր հանգամանք. այո, առաքելությունը հանդես է գալիս Եվրոպական Միության մանդատով, բայց բոլորը, այդ թվում Մոսկվայում և Թեհրանում, գիտեն՝ այդ նույն ԵՄ երկրները նաև ՆԱՏՕ-ական պետություններ են, հետևաբար՝ ռուսական և իրանական կողմերն այդ գործընթացը դիտարկում են ոչ թե Եվրոպական Միության դիտորդների հանգամանքը նկատի ունենալով, այլ ենթադրելով, որ գործ ունենք ՆԱՏՕ-ական ուժերի հետ: Այո, նրանք դիտորդներ են, բայց ՆԱՏՕ-ական պետություններ ներկայացնող անձինք:

Հատկապես Մոսկվայում նման անհանգստություն կա, ինչը երևում է նաև պաշտոնական հայտարարություններից: Դա որոշակի նոր մարտահրավերներ է ստեղծում թե հայ-ռուսական հարաբերությունների, թե հայ-իրանական հարաբերությունների համատեքստում: Իսկ նման մարտահրավերները, միանշանակ, չեն բխում Հայաստանի Հանրապետության շահերից, որովհետև գիտենք՝ հողի վրա, հատկապես Սյունիքում և Հայաստանի Հանրապետության մնացած մասում, ինչպես նաև Արցախի Հանրապետությունում, անվտանգությունն ապահովվում է ռուսական զորակազմի կողմից: Դրանց կարող ենք կոչել խաղաղապահներ, սահմանապահներ, բայց իրականության մեջ գործ ունենք ռուսական ռազմական ներկայության հետ, որը կարևոր զսպող հանգամանք է թե Հայաստանի Հանրապետության սահմաններին, թե Արցախի Հանրապետության բնակչության անվտանգության ապահովման գործում:

Մյուս կողմից՝ եթե դառնանք Հայաստանի հարավային հարևանին, որի հետ անմիջականորեն սահմանակցում է Սյունիքի մարզը, ապա արդեն իսկ աներկբա և անկասկած է, որ 2022-ի սեպտեմբերյան սահմանային սրացումների ու ադրբեջանական հերթական ագրեսիայի պայմաններում Իրանը կարևորագույն դերակատարություն ունեցավ ադրբեջանաթուրքական նկրտումները զսպելու գործում:

Ուստի ունենք մի իրավիճակ, երբ հենց հողի վրա մեր անվտանգությունն ապահովում են ռուսական զորակազմը, նաև իրանական կողմը՝ իր հռետորաբանությամբ, Ադրբեջանի սահմանների ողջ երկայնքով պարբերաբար անցկացվող զորավարժություններով, դիվանագիտական ջանքերով:

Եվ ունենք եվրոպացի դիտորդներ, որոնք ներկայացնում են ՆԱՏՕ-ական պետություններին, ինչը, բնականաբար, առաջացնում է որոշակի հակասություններ և շահերի բախում:

Հայաստանի Հանրապետության իմաստնությունը պետք է դրսևորվի այն բանում, որ կարողանա մեր տարածքում խուսափել խոշոր խաղացողների շահերի բախումից, որովհետև դա կարող է հղի լինել վտանգներով:

Եվ, ի վերջո, մի շատ կարևոր հանգամանք նույնպես, որին անպայման կուզենամ անդրադառնալ. մենք հաճախ մոռանում ենք, որ Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման գործառույթը, որպես առաջնահերթություն, հենց Հայաստանի Հանրապետությանն է: Երբեմն մեզանում, նաև հասարակական տիրույթում, տրամադրություններն այնպիսին են, որ ենթադրվում է, թե մեր անվտանգությունը պետք է ապահովեն ուրիշները: Ո՛չ, և կրկին անգամ ո՛չ: Մեր անվտանգության միակ և ամենավստահելի երաշխիքը հայոց զինվորի, մեր փառապանծ բանակի ներկայությունն է և նրանց վերապահված գործառույթների կատարումը հանրապետության սահմանների երկայնքով:

– Անկեղծորեն՝ շատ ենք ուզում, որ ԵՄ առաքելությունը հավելյալ ներդրում լինի սահմանամերձի անվտանգային համակարգում, բայց… Ֆրանսիայի նախագահի՝ Մյունխենի անվտանգության համաժողովում արած հայտարարությունը, թե մեզ իբրև բուֆեր են դիտարկում ընդդեմ Ռուսաստանի, մեր հույսերը նվազագույնի է հասցնում:

– Ես չունեմ դիվանագիտական կաշկանդվածություն, հետևաբար՝ շատ անկեղծ և ուղիղ կպատասխանեմ Ձեր հարցին: Մենք պետք է նախևառաջ մեզ համար արձանագրենք՝ որքանո՞վ է Հայաստանն անհրաժեշտ հավաքական Արևմուտքին: Կարծում եմ՝ մի դեպքում կարելի է խոսել նման կենսական անհրաժեշտության մասին, եթե Հայաստանը հակառուսական և հակաիրանական ուղղվածություն ունեցող պետություն լինի:

Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունը կարող է իրեն թույլ տալ նման «շռայլություն». բնականաբար, ոչ: Այլապես դա կլինի ոչ միայն վտանգներով լի պահվածք մեր պետության հանդեպ, այլև կարող է հանգեցնել խոշոր տերությունների շահերի բախմանը, որը չափազանց վտանգավոր հետևանքներ կարող է ունենալ Հայաստանի և Արցախի Հանրապետությունների համար: Հետևաբար՝ Եվրամիության և հավաքական Արևմուտքի ձգտումը Հայաստանը հակառուսական և հակաիրանական նպատակներով օգտագործելն է, ինչը հակասում է ազգային ու պետական մեր շահերին:

Ինչ վերաբերում է Արևմուտքի երկրորդ շահին, ապա դա Ադրբեջանի վրա ազդեցության որոշակի լրացուցիչ լծակ ստանալն է՝ ի դեմս այդ դիտորդների, որովհետև Ադրբեջանը չափազանց սերտ կապերով, հատկապես էներգետիկ ոլորտում և դրա բաղադրիչ հանդիսացող գազային մատակարարումների տիրույթում, կապված է Եվրամիության հետ: Եվ Եվրամիությունը չի էլ թաքցնում դա: Ուստի Բաքվի բռնապետին սանձելու նպատակով օգտագործվում է թե՛ քաղցրաբլիթի, թե՛ մտրակի գործառույթը, և կարծում եմ՝ դիտորդների ներկայությունը նաև այդ մտրակն ապահովելու մեխանիզմներից է:

Ինչ վերաբերում է մեր տարածաշրջանում ռուսական կողմի շահերին, ակնհայտ է՝ Ռուսաստանի Դաշնությունն ունի կենսական շահեր, և այդ իմաստով Արցախում ու Հայաստանի Հանրապետությունում հայկական բնակչության առկայությունը, նաև մեր երկու պետական միավորների առկայությունը համահունչ են ռուսական շահերին:

Կրկին մի կողմ թողնելով հարցի զգացական կողմը, արձանագրենք՝ Ռուսաստանին անհրաժեշտ է տարածք, որտեղ կկարողանա ունենալ իր ռազմակայանները: Եվ նման տարածքները, բացի Հայաստանի Հանրապետությունից և Արցախի Հանրապետութունից, Հարավային Կովկասում այլևս չկան: Հետևաբար՝ այս տարածաշրջանում մեր և Ռուսաստանի Դաշնության շահերը միանշանակ համընկնում են:

Մյուս կողմից, եթե դիտարկենք երրորդ խաղացողին՝ Իրանին, ապա ակնհայտ է, որ ադրբեջանաթուրքական դաշինքի նկրտումները, որոնք միտված են Արցախի ամբողջական կլանմանը և Հայաստանի Հանրապետության անքակտելի մաս հանդիսացող Սյունիքի ու Վայոց ձորի մարզերի պոկմանը, ուղղակի հակասության մեջ են իրանական շահերի հետ: Իրանցիները, Աստված մի արասցե, այդ սցենարի իրականացման պարագայում կհայտնվեն անվտանգային բոլորովին այլ՝ իրենց համար խիստ խոցելի միջավայրում: Կկտրվեն դեպի հյուսիս այլընտրանքային ելքից, փաստորեն իրենց հյուսիս-արևմտյան սահմանի երկայնքով կունենան ադրբեջանաթուրքական միասնական ռազմավարական տարածք:

Այնուհետև, Իրանում քաջատեղյակ են, որ հաջորդ թիրախը՝ պանթուրանական ծրագրի իրականացման դեպքում, Թավրիզն է կամ Ատրպատականը, Իրանի հյուսիս-արևմտյան հինավուրց երկրամասը, ուստի իրանական կողմի շահերն էլ այս տարածաշրջանում համընկնում են Հայաստանի Հանրապետության շահերին:

Ուրեմն՝ Եվրամիության հետ Հայաստանն ակնհայտորեն պետք է պահպանի հարաբերություններ, բայց այդ հարաբերությունները (կրկնեմ) պետք է գան փոխլրացնելու առկա անվտանգային բացերը: Եվ որևէ պարագայում չպետք է Հայաստանը թույլ տա, որ մեր պետության տարածքն օգտագործվի հակառուսական, հակաիրանական նպատակներով: Նույն կերպ նաև մեր պետության տարածքը չպետք է օգտագործվի հակաարևմտյան նպատակներով:

– Ներկա վիճակում, հատկապես Սյունիքում, չափազանց վտանգավոր է կեղծ հույսեր փայփայելը… Կրկին տեղափոխվենք իրականության տիրույթ. միայն արևելքից, հյուսիս-արևելքից և հյուսիսից Սյունիքն Ադրբեջանի հետ ունի երկու հարյուր կմ-ից ավելի սահման: Եղեգնաձորում տեղակայված առաքելությունն ի՞նչ կարող է անել գործնականում:

– Վերստին նշեմ՝ նրանց ներկայությունը (կարծում եմ) խորհրդանշական բնույթ է կրելու: Այո, որոշակի դիտարկումներ էլ կիրականացնեն, բայց նման առաքելությունից շատ մեծ հույսեր և ակնկալիքներ ունենալն անտեղի կլինեն, և որևէ պարագայում չպետք է ընկնենք էյֆորիայի մեջ, թե Հայաստանի Հան-

Շարունակությունը՝ էջ 7

Մեր տղաներն ամուր կանգնած են մարտական դիրքերում, պատրաստ՝ կասեցնելու հակառակորդի յուրաքանչյուր ոտնձգություն

Փետրվարի 18-ին Գորիսի տարածաշրջանի սահմանամերձ բնակավայրեր այցելած պատգամավորական խմբի մեջ էր Արսեն Թորոսյանը: Եվ, օգտվելով պատեհությունից, մեզ հետաքրքրող մի քանի թեմայի շուրջ հարցազրույց ունեցանք նրա հետ:

Հարցազրույցը, բաղկացած երեք մասից, ներկայացնում ենք առանձին-առանձին: Հարցերի առաջին խումբը, բնականաբար, սահմանային գոտում ստացած տպավորությունների և մեր երկրամասի պաշտպանական համակարգի վիճակի մասին էր:

– Պարոն Թորոսյան, նախ ողջունում ենք Աժ պատգամավորներիդ՝ նման ձևաչափով ու սահմանամերձի այսօրյա խնդիրներին տեղում ծանոթանալու առաքելությամբ Գորիսի տարածաշրջան կատարած այցը: Իհարկե, ենթադրում ենք, թե ինչ նպատակով եք ժամանել սահմանապահ գյուղեր, բայց կուզենայինք Ձեզանից լսել այդ մասին:

– Առաջին անգամ չէ, որ Աժ պատգամավորներն այցելում են առաջնագիծ՝ մարտական դիրքեր: Դեռ այն ժամանակվանից, երբ նոր էինք իշխանության եկել... 2020 թ. պատերազմից, ինչպես նաև Ադրբեջանի հետագա ագրեսիայից հետո նոր բնագծեր ունենք հատկապես արդեն հայտնի դարձած Սոթք-Խոզնավար հատվածում: Եվ առաջարկություն եղավ այս անգամ հենց այդ հատված այցելություն կատարել, իհարկե, համաձայնեցնելով մեր պաշտպանական գերատեսչության հետ:

Նպատակն էր՝ նախ՝ տեղում ծանոթանալ պայմաններին, մի քիչ՝ գուցե երրորդ կողմի աչքով դիտարկել իրավիճակը՝ ռազմաքաղաքական, աշխարհագրական առումով, ծանոթանալ զինվորների կենցաղային պայմաններին ու մնացած հարցերին, և մեր կարծիքը ներկայացնել համապատասխան մասնագետներին կամ գերատեսչություններին:

Արսեն Թորոսյանը (ծնված 1982-ին) 2018 թ. մայիսի 12-ից մինչև 2021 թվականի հունվարի 18-ը ՀՀ առողջապահության նախարարն էր, այնուհետև ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարը: 2021 թ. հունիսի 20-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքով ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի 8-րդ գումարման պատգամավոր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակով, Աժ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի անդամ է:

Հանդիպել ենք մեր զինծառայողներին՝ ժամկետային, պայմանագրային ու աշխարհազորային: Դրանով նաև հայտնել ենք մեր աջակցությունը, ցույց տվել, որ իրենց թիկունքին կանգնած ենք, այսինքն՝ իրենք մենակ չեն այդ կարևոր առաքելությունը կատարելիս: Եվ բոլորս՝ կլինենք Աժ պատգամավոր, լրագրող, շինարար, ուսուցիչ, պարտավոր ենք նեցուկ լինել զինվորականությանը, որովհետև նրանց կատարած աշխատանքն այս պահին անփոխարինելի է: Ճիշտ է, բոլորի աշխատանքն էլ կարևոր է, բայց այս պահին, հատկապես, ամենակարևորը հենց մեր զինվորականների ծառայությունն է: Եվ պետք է թե հոգեպես, թե մեր պետության ունեցած պարտավորությունների կատարումով նպաստենք, որպեսզի բոլոր հարցերը հնարավորինս լուծվեն՝ սպառազինությունից մինչև ճանապարհներ:

– Ձեր խոսքից հասկացանք, որ այցելության ընթացքում ստացած տպավորությունները, մարդկանց բարձրացրած հարցերը կամբողջացնեք և պատկան մարմիններին կներկայացնեք:

– Միանշանակ, որպեսզի մեր այցը, այսպես ասած, դատարկ կրակոցի չնմանվի, այլ կոնկրետ հետևանքներ ունենա: Այնպես չէ, որ բարձրացված կամ նկատված հարցերը շատ-շատ են: Անկեղծ պետք է լինեմ՝ սահմանագծում տեսանք արդեն կատարված հսկայածավալ աշխատանք: Նաև զինվորականության հետ խոսեցինք, որոնք ներկայացրին այդ աշխատանքները՝ վերջին մեկ կամ երկու տարվա ընթացքում կատարված: Բայց և մնացած հարցերի լուծումը պետք է մշտապես ուշադրության կենտրոնում լինի: Եվ ուզում եմ նաև հատուկ շեշտել՝ այս իրավիճակում, զինված ուժերի առումով, երբեք չի գալու ինչ-որ մի պահ, որ այլևս անելիք չի լինելու, միշտ կարելի է ավելի լավն անել. այսօր արեցինք նվազագույնը, վաղը կանենք ավելի լավը, գերազանցը. նոր տեխնոլոգիաներ են հայտնվում՝ դրանք կիրառության մեջ կդնենք, նոր հնարավորություններ են ի հայտ գալու՝ դրանք կօգտագործենք: Այսինքն՝ դա մշտական գործընթաց է, և չի լինելու մի պահ, որ ասենք՝ վերջ, այլևս անելիք չունենք...

– Այսօր գործընկերների հետ եղել եք հայ-ադրբեջանական սահմանագոտու մի շարք դիրքերում կամ, ինչպես ընդունված է ասել, առաջնագծում: Ձեր տպավորությունները մասամբ հայտնեցիք, կուզենայինք շարունակությունը լսել:

– Կարծում եմ՝ մեր տղաներն ամուր կանգնած են իրենց դիրքերում, պատրաստ են հակառակորդի յուրաքանչյուր ոտնձգություն կասեցնել: Զինված ուժերն իրենց մարտական հերթապահությունը կատարում են պատշաճ, բարձր մակարդակով: Իսկ ռազմաքաղաքական ղեկավարությունն աչալուրջ է, որպեսզի արագ լուծվեն առկա կամ առաջացող խնդիրները: Մենք էլ, ինչպես նշեցի, մեր ուժերի ներածին չափով պետք է օգնենք նրանց:

Զինծառայողների կենցաղային պայմանների մասով. մենք տեսանք բավական բարելավված վիճակ: Կրկնում եմ՝ միշտ էլ կա ավելին անելու խնդիր, և այդ մասին կխոսենք մեր գործընկերների հետ: Մնում է, որ ամեն մեկն

Շարունակությունը՝ էջ 7

Կառավարության սյունիքյան քաղաքականությունը թափանցիկության կարիք ունի

– Պարոն Թորոսյան, Կառավարության սյունիքյան քաղաքականությունը բազմաթիվ հարցերի տեղիք է տալիս: Եվ, ցավոք, հաճախ մարդիկ չեն կարողանում ստանալ մտահոգող հարցերի պատասխանը: Դրանցից մեկն առնչվում է 2021-ին ՀՀ կառավարության կողմից Սյունիքին հատկացված 1,2 կամ 1,5 մլրդ դրամին, որը տնօրինվել է Սյունիքի հարցերով աշխատանքային խմբի կողմից:

Ասում են՝ նման հատկացումներ կատարվել են նաև 2022-ին: Գոնե ուշացումով կարո՞ղ ենք իմանալ՝ 2021-ին հատկացված գումարը կոնկրետ ի՞նչ նպատակով և ո՞ր համայնքներում է ծախսվել:

– Սկսեմ հարցի վերջից: Երբ կառավարությունը սոցիալապես խոցելի մի խմբի համար ծրագիր է իրականացնում, ապա մեկ ուրիշ խումբ հարց է բարձրացնում՝ ինչո՞ւ նրանց համար և ոչ թե մեր խմբի համար: Այսօր նման հարցերի առնչվեցինք նաև Խնածախ գյուղում՝ բնակիչների հետ հանդիպման ընթացքում:

Այդ կապակցությամբ հետևյալը պիտի ասեմ՝ եթե կառավարությունն ինչ-որ բան անում է, դա չի նշանակում, որ մյուս խնդիրները չի ուզում լուծել: Պարզապես կա առաջնահերթությունների հարց... Կառավարությունն էլ անսխալական չէ, կարող է և առաջնահերթությունների ճշգրտման կարիք էլ լինի...

Հիմա՝ բուն հարցի մասին: Այդ ժամանակ վարչապետի աշխատակազմի ղեկավարն էի, երբ վարչապետի խորհրդական Ռոբերտ Ղուկասյանը գործուղված էր Սյունիքի մարզ ու ղեկավարում էր աշխատանքային տվյալ խմբի գործունեությունը: Եվ նրան տրվել էր լիազորություն՝ կառավարության կողմից հատկացված գումարները տնօրինելու, որոշ օպերատիվ հարցեր լուծելու համար: Ինչո՞ւ է դա արվել:

Երբ (դժբախտաբար) 44-օրյա պատերազմում պարտվեցինք, մենք հասկացանք, որ ստեղծված իրավիճակում ամենախոցելի տարածքը Սյունիքի մարզն է: Եվ անհրաժեշտություն առաջացավ՝ օպերատիվ կարգով որոշ հարցեր լուծել, իսկ պետական բյուջեն նման «գործիքներ» չունի, որ կարողանանք գումարն ինչ-որ մեկին տանք՝ ասելով՝ գնա և ինչ ուզում ես արա, միայն հարցը լուծիր: Դրա համար նման մեխանիզմ ստեղծվեց, որը, կարծում եմ, բավական էֆեկտիվ աշխատեց: Ինքս մի քանի դեպք գիտեմ, թե ինչի վրա է ծախսվել հատկացված գումարը: Օրինակ, ծախսվել է Սիսիանի բժշկական կենտրոնի վրա, տարբեր ծառայությունների համար տրանսպորտային միջոցներ են ձեռք բերվել՝ ԱԻՆ, ոստիկանություն, գյուղացիական տնտեսությունների համար թեթև գյուղտեխնիկա...

– Շատ լավ, այդ դեպքում ինչո՞ւ կատարվածը՝ հասցեական և մանրամասն չներկայացնել հանրությանը:

– Իհարկե, պետք է ներկայացնել, միանշանակ պետք է ներկայացնել: Շատ բաներ են արվել, թեև ինքս վստահ չեմ, որ ամեն ինչ գիտեմ, ասում եմ այն, ինչի հետ առնչվել եմ ու նաև ինչ-որ գիտեմ մամուլից: Բայց գործող մարզպետը, կարծում եմ, ավելի լավ գիտի՝ ինչ է արվել: Եվ, օրինակ, եթե ես նրա փոխարեն լինեի՝ մի հաշվետվություն կհրապարակեի՝ տող առ տող ներկայացնելով ծախսերը: Եվ առիթն օգտագործելով՝ կոչ եմ անում, որ նա դա անի: Նաև Ձեզ եմ խնդրում, որ այդ հարցով իրեն դիմեք...

Եկավ մի պահ, որ կառավարությունը հասկացավ՝ այդ մեխանիզմով աշխատելը, կարծես, այլևս շարունակելու իմաստ չունի: Ստացվում էր այնպես, որ առավելություն է տրվում մի մարզի, իսկ մյուս խոցելի մարզերին՝ ոչ. Գեղարքունիք, Վայոց ձոր, Տավուշ: Ու որոշվեց՝ այդ գումարները, որոնք բյուջեում կլինեն, ուղղել ըստ գերատեսչությունների:

– Ի՞նչ սկզբունքով և ովքե՞ր են Սյունիքին հատկացվող նմանատիպ պետական միջոցները տնօրինում: Արդյո՞ք այդ միջոցները տնօրինողները չպետք է տիրապետեն մարզի հիմնախնդիրներին:

– Դուք տեսնում եք, որ պետական բյուջեի աճ է տեղի ունենում ամեն տարի և բոլոր ոլորտային ծրագրերով նույնպես աճ է գրանցվում: Դա վերաբերում է բոլոր մարզերին և մեր կյանքի ամենատարբեր ոլորտներին՝ կապիտալ շինարարություն, ճանապարհաշինություն, դպրոցաշինություն, մանկապարտեզաշինություն, հիվանդանոցներ, բուժկետեր...

Նաև վստահ եմ, որ գիտեք՝ Հյուսիս-հարավի հատվածներից հիմա ամենաառաջնայինը Սյունիքի հատվածն է, որտեղ լինելու են թունելներ, կամուրջներ, և կառավարությունը հետևողականորեն դրանով զբաղվում է:

Նման ծրագրեր իրականացնելիս կամ միջոցներ հատկացնելիս համապատասխան պետական կառույցները, նաև տարածքային ու համայնքային իշխանություններն անհրաժեշտ հիմնավորումներ են ունենում:

– Եվրոպական Միությանն անդամակցող մի խումբ երկրներ հունվարի 18-ին հայտարարեցին Սյունիքին աջակցող իրենց նախաձեռնության մասին: Նախաձեռնության հինգ տարվա բյուջեն շուրջ 51 մլն եվրո է: Ի՞նչ սկզբունքով են բաշխվելու այդ միջոցները կամ որոշվելու ծախսերի ուղղությունը:

– Եվրոպական Միության մի շարք երկրներ, նաև Շվեյցարիան, որ Եվրոպական Միության անդամ չէ, հաշվի առնելով, որ Սյունիքը շատ կարևոր տարածք է ու ոչ միայն Հայաստանի, այլև Եվրոպայի համար, որոշել են ներդրումներ անել, որպեսզի Սյունիքը լինի ավելի պաշտպանված ու բարեկեցիկ, որպեսզի մարդիկ չուզենան հեռանալ Սյունիքից: Ես մեկ ծրագիր գիտեմ՝ 20 մլն եվրո արժժողությամբ. դա «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոնների կառուցումն է Գորիսում և Կապանում, որի օրինակն ունենք Լոռու մարզի Դեբեդ գյուղում:

Եթե առիթ ունենաք և այցելեք այնտեղ, ապա կտեսնեք, թե ինչպիսի քաղաքակր-

Շարունակությունը՝ էջ 7

Սիսիանում նախընտրական թեժ օրեր են, և ոչ միայն այդ մասին

– Պարոն Թորոսյան, նախ՝ փորձենք հետադարձ հայացք ձգել 2022-ի սեպտեմբերյան ընտրությանը. «ՔՊ» կուսակցության թիմը փաստորեն ամենաշատ ձայները ստացավ, նույնիսկ համայնքապետ ընտրեց, բայց ընտրված համայնքապետը՝ Արմեն Հակոբջանյանը, չկարողացավ անցնել իր պարտականությունների կատարմանը՝ երդման արարողությանն ավագանու անդամների պատշաճ քվորում չլինելու պատճառով:

– Որպեսզի հասկանանք, թե ինչ տեղի ունեցավ Սիսիանում 2022-ի սեպտեմբերին, մի քիչ հետ պետք է գնանք ու հասկանանք, թե ուժերի ինչ դասավորություն կար տվյալ ժամանակաշրջանում և ինչ տեղի ունեցավ քաղաքական առումով:

Դեռևս 2021 թվականի աշնանը, կոնկրետ ժամանակը չեմ հիշում, նշանակվեց Սիսիանի համայնքապետի պաշտոնակատար, քանի որ գործող համայնքապետն ընտրվել էր Ազգային ժողովի պատգամավոր, որից հետո դադարեցրել համայնքապետի իր լիազորությունները: Եվ օրենքով սահմանված կարգով վարչապետը համայնքապետի պաշտոնակատար նշանակեց Արմեն Հակոբջանյանին:

Ժամանակի ընթացքում տեսնելով, որ Արմեն Հակոբջանյանն արդյունավետ կառավարիչ է, կուսակցությունը որոշեց ընտրություններում համայնքապետի թեկնածու առաջադրել հենց նրան:

Ձուգահեռ աշխատանք էինք տարել՝ հասկանալու համար՝ արդյո՞ք այլ թեկնածուներ կան, թե՞ ոչ: Հանդիպել էինք տարբեր անձանց հետ, որոնցից ոմանք նույնպես ընտրապայքարին մասնակցեցին: Արդյունքում եկանք եզրակացության, որ թե՛ իր ունակություններով ու գործելակերպով, թե՛ հաղթելու հնարավորություններով Արմեն Հակոբջանյանն է նախընտրելի թեկնածուն:

Ինչ տեղի ունեցավ հետո: Որոշ գործընկերներ, ովքեր այս կամ այն կերպ հարում էին իշխանություններին կամ առնվազն հայտարարում էին, թե հարում են (ես անձամբ կասկածում էի նրանց մտադրություններին)՝ կարծեցին, թե կկարողանան նաև իշխանությունների կատարած աշխատանքն իրենց վերագրելով՝ ընտրողների քվեները ստանալ: Եվ աննախադեպ մի իրավիճակ ստեղծվեց…

Հայաստանի 18 համայնքում այդ ժամանակ ընտրություններ էին, և միայն Սիսիանում էր, որ նախընտրական պայքարի դուրս եկավ յոթ քաղաքական ուժ: Մի մասը գործող կուսակցություններ էին՝ որոշակի հետագիծ ունեցող, մյուս մասն էլ ինչ-որ շինծու դաշինքներ էին՝ հավաքովի: Մենք գիտեինք՝ նրանց հետևում ովքեր են կանգնած, ասենք՝ նախկին հանրապետականներ և այլն: Ու ստացվեց այնպես, որ մոտավորապես 300 հոգի միայն ավագանու թեկնածու առաջադրվեց նախընտրական ցուցակներով: Եվ եթե հաշվենք, որ նրանցից ամեն մեկը գոնե 10-15 ձայն կարող է բերել, ստացվում էր՝ 4-5 հազար ձայն: Եվ շատ դժվար էր 50+ շեմը հաղթահարել: Ու հիմնական պատճառը, որ չկարողացանք այդ շեմը հաղթահարել, հենց դա էր:

Այդքանով հանդերձ մենք ստացանք ամենաշատ թվով ձայներ…

Ընտրությունից հետո, երբ ձայները բաշխվեցին, քաղաքական աշխատանք տարվեց այլևս ընտրված ավագանու անդամների ու կուսակցությունների հետ, ու, եթե չեմ սխալվում, երկրորդ փուլով Արմեն Հակոբջանյանն ընտրվեց համայնքապետ: Բայց որպեսզի տեղի ունենար պարտականությունների ստանձնում՝ ահնարաժեշտ էր երդման արարողություն:

Անկեղծ ասած՝ մի քիչ լավ չեմ պատկերացնում, թե ինչու է «Ընտրական օրենսգրքում» նման կարգավորում մտցվել. եթե ընտրվել է, ապա պետք է կարողանա իր պարտականությունները կատարել:

Ինչևէ, ունեցանք այնպիսի իրավիճակ, որ ընտրված համայնքապետը չկարողացավ ստանձնել պարտականությունների կատարումը և, հետևաբար, մնաց համայնքապետի պաշտոնակատար: Ընտրություններին մասնակցած և ժամանակից շուտ իրենց հաղթող հայտարարած քաղաքական ուժերը հասկացան, որ իրենց պլանը չի աշխատել ու որոշեցին ամբողջական ցուցակներով ավագանու անդամի մանդատները վայր դնել: Իսկ նման դեպքում օրենքը նախատեսում է նոր ընտրություն:

Այնպես որ՝ այդպիսի ճանապարհ ենք անցել… Եվ կուսակցության վարչությունը քննարկել ու որոշել է՝ մարտի 26-ի ընտրություններում մեր թեկնածուն նույնն է՝ Արմեն Հակոբջանյանը:

– Փորձեք ընդհանուր գծերով նկարագրել Արմեն Հակոբջանյանին, ում երկրորդ անգամ է կուսակցությունն առաջադրել:

– Արմեն Հակոբջանյանը պարկեշտ անձնավորություն է, ապրում է Սիսիան խոշորացված համայնքի հոգսերով. նաև ինձ հետ է քանիցս քննարկել իր մտահոգությունները: Բայց պետք է հաշվի առնել կարևոր մի հանգամանք՝ դա միայն Արմեն Հակոբջանյանի ընտրությունը չէ, դա համայնքի ամբողջ ավագանու ընտրությունն է, որի մեջ նաև ուրիշներն են ներգրավված, ովքեր նույնպես Սիսիանի հոգսերով են ապրում:

Արմեն Հակոբջանյանը մեկուկես տարվա ընթացքում ապացուցել է, որ իր միակ նպատակը Սիսիանն ավելի լավ համայնք դարձնելն է, որպեսզի քաղաքացիները ցանկանան ապրել այդ համայնքում, որ փողոցները լուսավոր լինեն, մաքուր լինեն, տանիքները վերանորոգված լինեն: Ու մենք էլ ամբողջ թիմով կանգնած ենք նրա կողքին:

Ասել է թե՝ քաղաքացիներն ընտրում են ոչ միայն Արմեն Հակոբջանյանին, այլև կուսակցությանը, որը տեր է կանգնելու Սիսիանի համայնքային կառավարմանը՝ բոլոր առումներով, սկսած զուտ համայնքային կառույցներից՝ ՀՈԱԿ-ներ, տրանսպորտային, աղբահանության ծառայություններ և այլն, վերջացրած այն ամենով, ինչ կարող է անել կառավարությունը՝ մարզային ճանապարհներ, դպրոցներ, մանկապարտեզների շինարարություն և այլն:

Արմեն Հակոբջանյանը մեկուկես տարվա ընթացքում ապացուցել է, որ իր միակ նպատակը Սիսիանն ավելի լավ համայնք դարձնելն է, որպեսզի քաղաքացիները ցանկանան ապրել այդ համայնքում, որ փողոցները լուսավոր լինեն, մաքուր լինեն, տանիքները վերանորոգված լինեն: Ու մենք էլ ամբողջ թիմով կանգնած ենք նրա կողքին:

– Նախորդ ընտրություններում տպավորություն էր ստեղծվել, թե «ՔՊ» կուսակցության սիսիանյան թիմը պառակտված է կամ, ավելի ստույգ, համայնքապետի թեկնածուներից մի քանիսն էին ներկայանում «ՔՊ»-ի անունից: Դուք բացառո՞ւմ եք, որ մեկնարկած ընտրարշավում դարձյալ «ՔՊ» կուսակցության անունից այլ ուղղությամբ քարոզիչներ կհայտնվեն:

– Կարծում եմ՝ խաղաքարտերն այնքան պարզվեցին 2022-ի սեպտեմբերի 26-ի ընտրությունից հետո՝ առնվազն այն մարդկանց մասով, ովքեր հանրությանն այդպես էին ներկայանում… Եթե իրենք ընտրողներին ներկայանում էին «ՔՊ» կուսակցության անունից, ապա կարող էին, օրինակ, միանալ «ՔՊ»-ի առաջադրած թեկնածուին և կոալիցիա կազմել կամ առանց կոալիցիա կազմելու ընտրել Արմեն Հակոբջանյանին, բայց դա տեղի չունեցավ: Եվ կարծում եմ՝ մեր ժողովուրդն այնքան է հասունացել քաղաքականապես, այնքան է իմաստնացել, որ թացը չորից տարբերում է: Ու եթե նույն մարդիկ նորից գան ու ասեն՝ մենք այսինչ բանն ենք ուզում անել, կասեն՝ եղբայր, դու հինգ ամիս առաջ կարող էիր դա անել, ինչո՞ւ չարեցիր: Նաև մտածում եմ, որ ամոթից դրդված ու խայտառակ լինելուց խուսափելու համար չեն էլ մասնակցի ընտրությանը…

– Ինչպե՞ս եք գնահատում Ձեր քաղաքական թիմի հնարավորությունները Սիսիանի առաջիկա ընտրություններում, մանավանդ որ նախկին երկու ազդեցիկ թիմերն այս անգամ ընտրապայքարին չեն մասնակցելու:

– Ամեն դեպքում տրամադրված ենք ժողովրդի հետ անկեղծորեն խոսելու՝ նրա քվեն (հնարավորինս մեծ թվով) ստանալու տեսանկյունից, ու եթե ընտրողը կգնահատի՝ մենք հիսուն տոկոսից ավելի քվե կստանանք: Եվ այդ դեպքում համայնքապետ ինքնըստինքյան կդառնա նախընտրական ցուցակի առաջին համարը: Եթե կլինի քվեների այլ պատկեր՝ մենք կհաշտվենք իրավիճակի հետ, քանզի դա կլինի ժողովրդի ընտրությունը: Բայց մինչ այդ ամեն ինչ անելու ենք, որ յուրաքանչյուր քաղաքացու բացատրենք, թե ինչու պետք է սեպտեմբերի 26-ին ընտրել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը՝ Արմեն Հակոբջանյանի գլխավորությամբ:

– Ձեր քաղաքական ուժը, իշխանության գալուց ի վեր, որդեգրել է արդար ընտրությունների գաղափարը, բայց… Վարչական ռեսուրս կոչվածը, կարծեք, միշտ եղել է, կա ու կլինի: Մայրաքաղաքային մամուլը մարզպետի սիսիանյան վերջին տուրնեն հենց այդ տրամաբանության մեջ տեսավ:

Կարո՞ղ եք սիսիանցի ընտրողին հավաստել, որ մարտի 26-ի ընտրությունն այդ առումով (և ոչ միայն) խոցելի չի լինի, մի խոսքով՝ կունենանք ազատ և արդար ընտրություն: Բնականաբար, ընտրական հանձնաժողովների, ընտրությանը մասնակցող մյուս քաղաքական ուժերի հետ մեկտեղ:

– Անկեղծորեն՝ չեմ կիսում մարզպետի շրջագայության հետ կապված տեսակետը, ասեմ ինչու: Մենք թերանում ենք հաճախակի այցեր կատարել մեր բնակավայրեր, համայնքներ, խոսել բնակիչների հետ և պարզել նրանց խնդիրները: Եվ եթե մարդն ի պաշտոնե, որ պարտավոր է այդ խնդիրներով զբաղվել, այցելում է բնակավայրեր, մենք ոչ թե պետք է քննադատենք նրան, այլ ողջունենք: Հակառակ իրավիճակը պետք է քննադատենք, թե ինչո՞ւ, օրինակ, որևէ մարզպետ պարբերաբար չի այցելում մարզի բոլոր գյուղերը: Ես մտածում եմ՝ եթե լինեի մարզպետ, ապա պարբերաբար կայցելեի գյուղեր: Եվ եթե Սյունիքի մարզպետն այցելել է Սիսիանի գյուղեր, ապա դա տրամաբանական պետք է համարել:

Ինչ վերաբերում է վարչական ռեսուրսի թեմային, ապա հետևյալը կասեմ՝ արդար ընտրությունները ոչ միայն մեր կուսակցության սկզբունքի հարց են, այլև ազգային անվտանգության խնդիր: Եկեք ճիշտ հասկանանք՝ մեր երկիրը հիմա ունի անվտանգային մարտահրավերներ, որոնց կարողանում ենք ինչ-որ ձևով դիմակայել միայն այն պատճառով, որ ժողովրդավար երկիր ենք, և ժողովրդավար աշխարհը, հատկապես Եվրոպան, միայն այդ իրողությունը գնահատելով են մեզ ձեռք մեկնում շատ հարցերում, օգնում մեր անվտանգային հարցերը կառավարել: Ընդ որում՝ օրինակները բազմաթիվ են, թե ինչպես չենք օգտագործել վարչական ռեսուրսը նախորդ ընտրություններում:

Միանշանակ կարող եմ հավաստիացնել՝ այս անգամ ևս խոսք լինել չի կարող վարչական ռեսուրսի օգտագործման մասին: Եվ դա դատարկ ու սին հավաստիացում չէ, այլ առնվազն երկու համապետական ընտրություններով, նաև 2021 և 2022 թվականների ՏԻՄ ընտրություններով ապացուցված գործելակերպ: Այդ ընտրություններից ոչ մեկի ժամանակ տեղ չենք թողել, որ խախտվի ընտրողի կամարտահայտության հնարավորությունը: Կրկնեմ՝ դա ոչ միայն մեր կուսակցության որդեգրած սկզբունքն է, այլ մեր երկրի ազգային անվտանգության հարցը: Դա նաև կոչ է մյուս բոլոր քաղաքական ուժերին՝ երբեք կասկածի տակ չդնել Հայաստանում անցկացվող ընտրությունների թափանցիկությունը, անաչառությունը:

– Եվս մեկ հարց, որը միայն ընտրություններին չի առնչվում: Բոլոր ժամանակներում և բոլոր երկրներում իշխող քաղաքական ուժը (հասկանալի պատճառով) գայթակղիչ է եղել… Ինչպե՞ս եք վերաբերվում երևույթին, որ «ՔՊ»-ին երեկ հայհոյող կամ բոլորովին այլ կուսակցության «զինվորագրված» մարդիկ փորձում են հիմա էլ մտնել «ՔՊ»-ի շարքերը, և հաճախ նրանց հաջողվում է:

– Ես անձամբ կարծում եմ՝ մենք պետք է բծախնդիր լինենք նման մարդկանց կուսակցության շարքերն ընդունելու հարցում: Պատիվ և առիթ եմ ունեցել անցյալ տարի հազարավոր դիմումատուի հետ անձամբ հանդիպել, ովքեր ցանկություն են հայտնել մտնել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության շարքերը: Եվ ինձ հաճախ համեմատել են քննությունից կտրող դասախոսի հետ, որովհետև ինձ համար տվյալ անձնավորության նախորդ տարիների քաղաքական դիրքորոշումներն են նույնիսկ կարևոր եղել: Կարևոր է եղել, թե ինքն ինչու է ուզում մտնել կուսակցության շարքերը: Ուզում է աշխատանք կամ պաշտոնի բարձրացո՞ւմ, թե՞ իրապես հավատում է այն արժեքներին, գաղափարներին, որ կրում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը: Եվ, այդուհանդերձ, Դուք ճիշտ եք նկատում, նման մղումներ կան, դրա պատճառով է, օրինակ, որ կուսակցությունը 2018 թվականին որոշել էր՝ մոտ մեկ տարի ոչ մեկին չընդունել կուսակցության շարքերը, և այդպես էլ եղավ:

Մենք անցյալ տարի ենք սկսել լայն թափով կուսակցության շարքերի ընդունելություն կատարել: Սակայն, այդ բոլորով հանդերձ, չենք հավակնում դառնալ մասսայական կուսակցություն, ինչպիսին Կոմունիստական կուսակցությունն է եղել, Հանրապետականը, Բարգավաճ Հայաստանը և այլն, ովքեր հայտարարում էին, թե հարյուր հազարավոր անդամներ ունեն, բայց գիտենք՝ դա ինչպես է եղել. եկել է դպրոցի ուսուցչուհին, նրան տոմս են տվել ու ասել՝ դու արդեն կուսակցական ես: Մենք ոչ միայն չենք անում նման բան, չենք էլ խրախուսում, որ ապաքաղաքական մարդիկ քաղաքականությամբ զբաղվեն: Կարծում ենք՝ կուսակցականը պետք է լինի լուրջ քաղաքական գործիչ, պատրաստ լինի թե՛ կուսակցության արժեքներն առաջ տանել, թե՛ պատասխանատվություն կրել կուսակցության քայլերի համար: Բայց այո, Ձեր նշած վտանգը միշտ էլ կա:

Այդ ամենի հետ մեկտեղ ցույց ենք տվել, որ մյուս քաղաքական ուժերի նկատմամբ տոլերանտ ենք, բռնաճնշումներ չենք գործադրում: Այսպիսի օրինակ բերեմ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայիս պատկերը ցույց է տալիս՝ համայնքների գրեթե կեսում հաղթել են քաղաքական այլ ուժեր, և մենք դրա հետ հաշտ ենք, որովհետև դա է ժողովրդավարությունը: Մենք չենք պատրաստվում այդ համայնքներին պատժել, ասել՝ տեսեք՝ քանի որ մեզ չեք ընտրել, դուք այսինչ բանը չեք ստանա: Ընդհակառակը՝ փորձում ենք մեր աշխատանքով ցույց տալ, որ եթե հաջորդ ընտրություններին մեր կուսակցությանն ընտրեք, ապա կարող ենք ավելի լավ աշխատել:

– «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կառույցները Սյունիքում՝ Մեղրի, Քաջարան, Կապան, Գորիս, Սիսիան… Ի՞նչ պատկեր ունեն:

– Սյունիքում շատ կուսակցական կառույցներ, ցավոք սրտի, չունենք: Այս պահի դրությամբ ունենք միայն Մեղրիում և Կապանում: Այնտեղ են ձևավորված եղել կորիզները, բջիջները՝ այսպես ասած: Այդ կազմակերպություններում ունենք ինը հոգուց բաղկացած խորհուրդ և մեկ վերահսկող խորհուրդ, բայց նաև պատրաստվում ենք տարածքային կազմակերպություններ հիմնել Սիսիանում ու Գորիսում: Որքան գիտեմ՝ Քաջարանը Կապանի հետ է միացված, ամեն դեպքում կազմակերպչական բնույթի այդ գործը շարունակելու ենք… //

Նռնաձորում ոգեպինդ և արարող մարդկանց հանդիպեցինք, թեև գյուղը կքած է բազում խնդիրներից



Յուրաքանչյուր գյուղ (մարդու նման) ունի իր ճակատագիրը՝ ոչ մեկին չնմանվող, չկրկնվող: Նույնը վերաբերում է Մեղրու տարածաշրջանի Նռնաձոր գյուղին...

Նռնաձորը վարչական տարածքով Սյունիքի ամենախոշոր բնակավայրերից է: Գյուղի ներկա ընթացքի մասին, բնականաբար, առաջին տեղեկությունները ստանում ենք Ալեքսան Բոյաջյանից. բնակավայրի վարչական ղեկավարն է 2016 թ. նոյեմբերից՝ Մեղրի համայնքի խոշորացումից հետո: Ծնվել է Մեղրիում, որտեղ էլ դպրոց է հաճախել, 2000 թվականից բնակվում է Նռնաձորում, զբաղվում գյուղատնտեսությամբ: Նռնաձորում գրանցված է 44 տնտեսություն, բնակիչների թիվը՝ 124: Երիտասարդ ընտանիքներ կան, ծնունդներ են լինում...

Նռնաձորը բնավ էլ հանգչող փեթակ չի հիշեցնում, ինչպես Սյունիքի լեռնային ու սահմանային շատ գյուղեր... Դեռ ավելին՝ սուբվենցիոն ծրագրով նախատեսվում է բնակավայրում մանկապարտեզ կառուցել...

Պաշտոնական փաստաթղթերում, որպես բնակավայրի գյուղատնտեսական գործունեության ուղղություններ, նշվում են անասնապահությունը և դաշտավարությունը: Բայց իրականությունն այն է, որ գյուղն ունի 84 հեկտար հող, և գյուղացիք հիմնականում զբաղվում են պտղաբուծությամբ, ստանում նուռ, թուզ, արքայանարինջ. վերջին երկուսից ընտիր չիր են պատրաստում: Ընդհանրապես նռնաձորցիների եկամտի աղբյուրը հենց այդ մրգերն են...

Նռնաձորում էր գտնվում «Գորիս» քրեակատարողական հիմնարկի Մեղրու տեղամասը, որտեղ պատիժ էին կրում անզգուշությամբ հանցանք կատարածները՝ մեկ տասնյակից ավելի մարդ: Նռնաձորի վարչական ղեկավարը նշում է, որ գյուղի վարչական տարածքում գտնվող 153 հեկտար հողատարածքները 1994-ին հատկացրել են հանրապետության Արդարադատության նախարարությանը, կամ որ միևնույնն է՝ վերոնշյալ քրեակատարողական հիմնարկին, որը 2018-2019 թվականներից չի գործում, և հիմա տարբեր ատյաններ գրություններ են հղել՝ այդ հողատարածքները Նռնաձորին վերադարձնելու՝ որպես համայնքային սեփականություն, որից հետո միայն կարող են այն լիարժեքորեն մշակել ու արդյունք ստանալ:

Ինչպես տեղեկացանք՝ անասնապահությունը, որպես այդպիսին, վերանում է գյուղում: Քանզի ամառային արոտավայրերը 44-օրյա պատերազմից և դրան հաջորդած իրադարձություններից հետո հայտնվել են հակառակորդի դիրքերի անմիջական հարևանությամբ, որոշ տեղերում դարձել դիրքային հատվածներ: Եվ իրողությունն այն է, որ լուրջ խնդիր է դարձել այդտեղ անասուն արածեցնելը: Ճիշտ է, գյուղում այսօր հաշվվում է 120 ոչխար, խոշոր եղջերավոր անասուններ էլ կան, բայց գյուղատնտեսության այդ ճյուղն այլևս ապագա չունի, քանի դեռ սահմանամերձի արոտավայրերը լիարժեք չեն օգտագործվում:

Բանջարաբոստանային մշակաբույսեր՝ կանաչեղեն, կարտոֆիլ, լոբի ստանում են տնամերձերից. այլ տեղ աճեցնելու հնարավորություն չունեն, քանի որ բնակավայրի հիմնախնդիրը տարիներ ի վեր մնում է ոռոգման և խմելու ջուրը: **«Ամենաուշը մարտի 1-ից ոռոգման ջուրը պիտի հասնի Նռնաձոր, որովհետև այդ ժամանակ ենք ծառատունկը սկսում: Բայց ոռոգման ջուր մատակարարելու գործում բոլորին մի արշինով են չափում,- մանրամասնում է վարչական ղեկավարը,- և մեզ ոռոգման ջուր մատակարարում են մարտի վերջին, ապրիլի սկզբին: 2015 թվականին «JFAD»-ի ծրագրով ոռոգման համակարգ են կառուցել, որի միջոցով ջուրը Լեհվազի մոտից հասնում է (ինքնահոս եղանակով) Նռնաձոր: Պարզապես «Մեղրի» ջրօգտագործողների ընկերությունը նորոգման աշխատանքներն ավելի վաղ պիտի սկսի, որ ջուրն Արաքսի մեջ թափվելու փոխարեն հասնի մեզ: Մարդիկ ծառ են տնկում, և ով ավտոմեքենա ունի՝ ջուրը մեքենայով տեղափոխում է, նորատունկի տակ մի դույլ ջուր լցնում, որ կարողանան ծառը պահել»:**

Մինչև օգոստոս Մեղրիի ոռոգման համակարգը լիարժեք գործում է, խնդիրները սկսվում են դրանից հետո, երբ Մեղրի գետը բարակում է, ջուրը հազիվ հերիքում է Մեղրի քաղաքին և մերձակա բնակավայրերին: Այդ ժամանակ էլ Նռնաձորում անցնում են մեխանիկական ոռոգման: Գործում է եռաստիճան ոռոգման համակարգ, բայց վթարներն անպակաս են լինում մայրուղու մաշվածության պատճառով: Նաև պոմպերն ու շարժիչները հին են՝ խորհրդային արտադրության, խողովակաշարը տեղ-տեղ մաշված է, պահեստամասերը դժվարությամբ են գտնվում, տեղ են հասնում ուշացումներով: Իսկ այդ ամենն ամռան շոգից թառամող բույսին չես բացատրի: Գյուղացիներն ամիսը մեկ են այգի ջրում, սպասում լավ օրվա գալուն, սակայն հաջորդ տարի նույն պատմությունը կրկնվում է...

Խմելու ջրի մատակարարման հարցում էլ խնդիրներ են ծագում օգոստոսից, երբ գյուղի քյարիզներից մեկը չորանում է, մնում են մյուս քյարիզի հույսին, բայց, այնուամենայնիվ, կարողանում են ամռանը 2-4 ժամ ջուր տալ բնակչին: Այդուհանդերձ, նռնաձորցիներին հուզող ամենակարևոր խնդիրն անբարեկարգ, քիչ ասել է թե՝ դժվարանցանելի ճանապարհն է: Ի դեպ, ճանապարհի նորոգումը մի քանի տասնամյակի պատմություն ունի. 2003-ին մեր թերթում («Սյունյաց աշխարհ», 10 մայիսի 2003 թ.) հրապարակում էի պատրաստել Նռնաձորի մասին. ո՞րն է գյուղի առաջ ծառացած ամենահրատապ խնդիրը, այն ժամանակվա գյուղապետ Գրիգոր Բոյաջյանը (ներկայիս վարչական ղեկավարի հայրը) պատասխանել էր՝ հիմնականը ճանապարհի նորոգումն է, մնացածն ինքներս էլ կանենք: Ինչպես տեսնում ենք, երկու տասնամյակ անց ճանապարհի հիմնանորոգումը հրատապ և այժմեական է նաև մեր օրերում: Անցած տարիներին ճանապարհի մասնակի նորոգումներ են եղել, բայց չափազանց հեռու է հիմնախնդրի լուծումից: Մասնավորապես, անցած տարի գարնանը մոտ ութ կիլոմետր ճանապարհ մեղրեցի ճանապարհաշինարարները նորոգել են, բայց դա ժամանակավոր լուծում է:

Վերջերս Մեղրիի «ՃՇՇՁ» ընկերության գլխավոր տնօրեն Ազատ Գասպարյանը «Սյունյաց երկրի» հետ հարցազրույցում փոխանցեց, որ Շվանիձոր-Նռնաձոր ճանապարհահատվածի հիմնանորոգումն իր վաղեմի երազանքն է, և դրա նախագծման աշխատանքներն ավարտական փուլում են: Ինչպես ասում են, նռնաձորցիները դարձյալ պիտի սպասեն և հուսան...

Ուրախացնողն այն է, որ նաև Մեղրիի համայնքապետարանի աջակցությամբ շաբաթական չորս անգամ՝ 2022 թ. սեպտեմբերից, երթուղային փոխադրամիջոցը գյուղ է մտնում, ուղեվարձն էլ սիմվոլիկ մի գումար է՝ 200 դրամ: Այլապես տաքսու վարորդները 10-15 հազար դրամ են պահանջում Մեղրուց Նռնաձոր հասնելու համար:

Նռնաձորի դպրոցը, որ կրթադաստիարակչական արդյունավետ աշխատանքի օրինակ կարող է ծառայել

Գյուղը դպրոցով է կանգուն. այս ճշմարտությունը Նռնաձոր գյուղի պարագայում նոր հնչեղություն է ստանում, քանզի սահմանամերձ բնակավայրն ուղիղ գծով երեք-չորս կիլոմետր է հեռու թշնամուց: Ահա ինչու, այցելելով Նռնաձոր, առաջինը դպրոց ենք մտնում:

Կրթօջախի շենքը համայնքի բարետես կառույցն է. շահագործման է հանձնվել 2007 թվականին՝ Մեղրիի «ՃՇՇՁ» ընկերության շինարարների ձեռամբ: Դպրոցի նախկին մասնաշենքը փայտաշեն էր և որի կարգավիճակն անորոշ է, քանզի ցայսօր դպրոցի հաշվեկշռում է: Տնօրեն Սուսաննա Գրիգորյանը, ով պաշտոնավորում է 2009 թվականից, նախ ներկայացնում է ուսուցչական կազմը՝ նախապես հաղորդելով, որ ընթացիկ ուստարում համալրված են մանկավարժներով, միայն անգլերենի դասավանդումն իրականացվում է հեռավար՝ Գյումրիի թիվ 1 դպրոցից: Այժմ ուսուցիչներից վեցը դրսից են հաճախում, հինգը՝ տեղացի է... Վեց երեխա ունեցող մանկավարժը Նռնաձոր է հասնում Վարդանիձոր գյուղից, որտեղ բնակվում է:

«Մեր ուսուցիչները հերոսական աշխատանք են կատարում...», – ասում է տնօրենը: Եվ դրանում դժվար չէ համոզվել. մի առանձին տառապանք է, օրինակ, Մեղրիից Նռնաձոր հասնելը: Նախ՝ երկու տեղ մեքենան կանգնեցնում ու ստուգում են փաստաթղթերը. ժամանակներն ու իրավիճակն են այդպես պահանջում: Ճանապարհը սկզբից (մինչև Ալվանքի և Շվանիձորի խաչմերուկներ) ասֆալտապատ է, իսկ հետո սկսվում է հողածածկ հատվածը, և մեքենան է փորձությունների ենթարկվում, և վարորդն ու ուղևորը, մինչև գյուղ են հասնում: Ասենք, որ Նռնաձորը ճանապարհի խնդիր է ունեցել ի հնուց անտի՝ տակավին խորհրդային տարիներից: Այն ժամանակ, որքան էլ զարմանալի լինի, ճանապարհը միակողմանի երթևեկություն ուներ: **Այծի ճանապարհ,** – այսպիսի բնորոշում էին տվել անցնող-գնացողները: Հիմա, թեև այլ տեղանքներով է ձգվում ճանապարհը ու թեև 2022-ին մասնակիորեն բարեկարգվել է, բայց հիմնովին նորոգման կարիք ունի:

«Ճանապարհը մեծ նշանակություն ունի, մանկավարժներ են եղել, որ ճանապարհի պատճառով չեն եկել աշխատելու մեր դպրոցում, մեկը, օրինակ, ասաց. «Ողնաշարի խնդիր ունեմ, այս ճանապարհին չեմ դիմանա»: Կամ ուսուցչի օգնականի կես դրույքը՝ 40 հազար դրամ է, այդքան վարձատրության համար նա շաբաթական չորս անգամ պիտի Նռնաձոր հասնի. սրանով, կարծում եմ, ամեն ինչ ասված է», – եզրակացնում է մեր զրուցակիցը և հավելում՝ անհրաժեշտ է արտոնություններ տալ սահմանամերձ գյուղերին, որ ուսուցիչների մեջ աշխատելու շահագրգռվածություն առաջանա: **Կամ՝ «Միևնույն դասը երկու-երեք աշակերտի համար պարապում եմ ջանադրաբար, որը մեծ դպրոցում կպարապեինք 20 աշակերտի համար, բայց վարձատրությունը տարբեր է. 2023 թվականի սեպտեմբերից հարցը, որքան տեղյակ եմ, դրական լուծում կստանա. սպասում ենք»:**

Շարունակությունը՝ էջ 8

Մեր տղաներն ամուր կանգնած են մարտական դիրքերում, պատրաստ՝ կասեցնելու հակառակորդի յուրաքանչյուր ոտնձգություն

Սկիզբը՝ էջ 4

իր պարտականությունը, իր աշխատանքը կատարի պատշաճորեն:

– Դուք հանրապետությունում իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչ եք, ճանաչված գործիչ: Ուստի և, առիթն օգտագործելով, ուզում ենք մարզի բնակիչներին մտահոգող որոշ հարցեր արծարծել:

2022 թ. սեպտեմբերյան իրադարձությունների հետևանքով, ըստ ՀՈՒ գլխավոր շտաբի պետի հայտարարության, Սյունիքում դիրքեր ենք կորցրել և՛ Մեծ Իշխանասարի հատվածում, և՛ Ներքին Հանդում: Երկու դեպքում էլ խոսքը ռազմավարական բացառիկ նշանակության հատվածների մասին է: Հետաքրքիր է՝ տարածքային կամ դիրքային այդ կորուստների համար որևէ մեկը պատասխանատվություն կրե՞ց, թե՞ ոչ:

– Եղել է հակառակորդի, ցավոք սրտի, մեր ուժերին գերազանցող մեծաթիվ ուժերի հարձակում Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքի վրա. ոչ Ղարաբաղի, ոչ վիճելի տարածքների վրա: Մեր զինված ուժերը կռիվ են տվել, ունեցել ենք 200-ից ավելի զոհ: Ու այդ կռվի արդյունքում հակառակորդին պատճառվել են զգալի կորուստներ: Եվ ինչ-որ մի պահի, նաև դիվանագիտական գործիքներով, կանգնեցվել է հարձակումը:

Հիմա ասել՝ ինչ-որ մեկը մեղավոր է եղել այդ կորուստների համար, կարծում եմ՝ ռազմագիտական առումով խիստ սխալ է, բայց նաև չեմ բացառում, որ կարող է որևէ մեկն իր պարտականությունը չի կատարել: Օրինակ, տագնապն ուշ տված լիներ կամ իր դիտակետը թողած լիներ և այլն, բայց մենք չենք կարող ապրիորի նման մեղադրանքներ հնչեցնել, դա նաև վիրավորական կլինի մեր զինված ուժերի համար: Նաև չեմ ուզենա, որ դա տարածվի ամբողջի վրա, իսկ եթե եղել են նման առանձին դեպքեր, ապա պատկան մարմինները պետք է դրանով զբաղվեն և քրեաիրավական գնահատական տան:

Ռազմագիտական առումով, իհարկե, սահմանագոտում կատարվող աշխատանքը մշտական պրոցես է՝ սկսած դիրքերի տեղակայումից՝ մեկը ցածր է, մյուսը՝ բարձր, մեկը ճանապարհը դիտարկում է, մյուսը՝ ոչ: Դա մշտական պրոցես է, պետք է իմանանք մեր անելիքները, բայց նաև բաներ կան, որ այս պահին արագ չես կարող փոփոխել…

– Արդյո՞ք վերը նշված պատճառներով էր վերջերս տեղի ունեցել Հատուկ նշանակության բանակային կորպուսի հրամանատարության գրեթե ողջ կազմի պաշտոնանկություն:

– Ինքս չեմ կարող պնդել կամ հերքել այդ շշուկները, բայց ասեկոսեները սովորաբար այդքան էլ ճիշտ չեն լինում: Այդքանով հանդերձ՝ անմիջական հրամանատարությունն է որոշում, թե իր ենթակայության ներքո գտնվող ստորաբաժանումները, դրանց ղեկավարներն ինչքանով են պատշաճ կատարում իրենց առջև դրված առաջադրանքը, և եթե չեն կատարում, որոշում է կայացվում ավելի լավով կամ նորով փոխարինել:

Հատուկ նշանակության բանակային կորպուսում կատարված փոփոխությունների առումով… Վստահում եմ մեր զինված ուժերի ղեկավարության որոշումներին և կարծում եմ՝ մի օրվա հարց չի եղել, մարդիկ ծառայել են երկար տարիներ, այդ ամենը հաշվի առնելով է, որ նման որոշումներ են կայացվել:

– Ինքս ռազմական գործի մասնագետ չեմ, բայց մանրամասն ճանաչում եմ Սյունիքի ամեն մի անկյուն: Ինչպե՞ս կարող է բանակային մեկ կորպուսը (որքան էլ Հատուկ նշանակության կոչվի)՝ ըստ պատշաճի պաշտպանի Սյունիքի և՛ արևելյան, և՛ արևմտյան սահմանները: Դրանք իրարից աշխարհագրորեն կտրված, ռելիեֆով տարբեր տարածքներ են:

44-օրյա պատերազմին հաջորդած իրադարձությունները, ցավոք, հաստատեցին Սյունիքի խոցելիությունը՝ նաև վերը նշված պատճառով: Ձեր քաղաքական ուժը մտադրություն չունի՞ քննարկման առարկա դարձնել Սյունիքում մեր զինված ուժերի կառավարման ներկա կերպը փոփոխելու հարցը:

– Գիտեք, ես չեմ հավակնի լինել դրա գնահատողը, որովհետև մասնագետ չեմ: Ինքս հիշում եմ՝ ինչպես է դա տեղի ունեցել: Այդ ժամանակ վարչապետի աշխատակազմի ղեկավարն էի: Երբ առաջին հարձակումը եղավ Ադրբեջանի կողմից՝ 2021 թվականի մայիսի 12-ին, այդ ժամանակ էլ որոշում կայացվեց միավորել բանակային երկու կորպուսը: Եվ այդ որոշման խորքում հիմնավորումներ կային՝ խիստ մասնագիտական, ռազմագիտական: Ու եթե այդ հիմնավորումներն այլևս, այսպես ասած, գործուն չեն ու հիմա կա այլ իրավիճակ, ապա չեմ բացառում, որ կարող են լինել քննարկումներ ու վերանայումներ: Միևնույն ժամանակ կարծում եմ, որ դա ամենևին քաղաքական գործիչների, հատկապես պատգամավորների գործը չէ, նույնիսկ կարծում եմ՝ վնասակար կլինի, եթե մենք նման միջամտություններ անենք և նման խորհուրդներ տանք մեր գործընկերներին: Դա պետք է որոշեն ռազմական գործի գիտակները՝ ի պաշտոնե ու նաև մասնագիտությամբ, ամեն ինչ հաշվի առնելով՝ սկսած ճանապարհներից, աշխարհագրությունից, եղանակային պայմաններից, զորքերի համալրվածությունից, շարժունակությունից, զինատեսակների կիրառման հնարավորություններից: Բազմաթիվ գործոններ կան…

– Աշխարհում հիմա, ցավոք, շատ պատերազմների ենք ականատես: Եվ երբ մտովի զուգահեռներ ենք անցկացնում այդ պատերազմների ու մեր շուրջը տեղի ունեցող իրադարձությունների միջև, աչքի է զարնում իրողությունը, թե որքան ենք խուսափում մեր բանակային կյանքի, սահմանամերձում կատարվող աշխատանքների շատ թե քիչ ունեցած հաջողությունները լուսաբանելուց, հանրայնացնելուց: Ինչո՞ւ չընդլայնել թափանցիկության սահմանները և չներկայացնել լավը, դրականը, կատարվածը, չէ՞ որ հանրությունը բանակային կյանքից լավ լուրեր լսելու կարիք ունի:

– Հասկանում եմ՝ բանակը պետք է ինչ-որ չափով՝ ողջամտության սահմաններում, թափանցիկ լինի: Ոչ միայն կատարված գործի, այլև տիրող բարքերի, մարդու իրավունքների պաշտպանության, զինվորների կամ սպաների նկատմամբ վերաբերմունքի, ամեն ինչի առումով: Բայց տեսեք՝ մենք հիմա խաղաղ պայմաններում չենք, թշնամին կամ հակառակորդը, ոնց կուզեք՝ անվանեք, ցանկացած բան օգտագործում է իր պլանները՝ մեզ գրավելու պլաններն ավելի հիմնավոր դարձնելու համար: Տեսնում եք նաև՝ սոցիալական ցանցերից ինչ ինֆորմացիա են ստանում, նաև մեր զինծառայողներին խաբելով կամ (չեմ ուզում նորից հիշեցնել) կաշառելով, գնելով և այլն. չնայած դատարանը պետք է որոշի, թե որքանով են նրանք մեղավոր կամ անմեղ: Եվ զգուշավորությունը՝ այս դեպքում, մեր օգտին է և ոչ թե հակառակը: Բայց դա չի նշանակում, որ պետք է ինչ-որ բաներ պարտակենք: Ընդհակառակը՝ եթե նույնիսկ խնդիր ենք տեսնում՝ պետք է համապատասխան մարմիններին ասենք ուղիղ, առանց ֆեյսբուքների, առանց ինտերնետ կայքերի և այլն: Եվ այդ բալանսը, ինչը շատ դժվար է, պետք է գտնենք, թափանցիկության և պաշտպանվածության բալանսը:

Հիմա, օրինակ, Ուկրաինիայի դեպքում… Տեսնում եք՝ ինչքան լրահոս կա. ոչ մի անգամ չեմ տեսել որևէ դիրքի կոնկրետ տեղակայում, կոորդինատ, այսինքն՝ նույնիսկ այդ մեծ երկրում, որտեղ շատ մեծ ռազմական գործողություններ են ընթանում, նրանք հետևում են, որպեսզի ավելորդ տեղեկատվություն չարտահոսվի: Այո, կաևոր է ինֆորմացիան, բնակչությանը տեղեկացնելը, թե ինչ է կատարվում ճակատում կամ մեր դեպքում՝ առաջնագծում: Թեև ակտիվ ռազմական գործողություններ չկան այս պահին՝ բարեբախտաբար, բայց դա երբեք չպետք է լինի հավելյալ «թղթադրամ»՝ հակառակորդի ուզած տեղեկությունները տարածելու համար: Թափանցիկության և զսպվածության այդ բալանսը մենք պետք է գտնենք լրագրողների հետ մեկտեղ: Ի՞նչ բացատրություն կարող է ունենալ իրավիճակը, երբ, օրինակ, հակառակորդի հարձակումից դեռ կես ժամ չանցած, հայկական որոշ լրատվամիջոցներ գրում են ինչ-որ կորուստների, կորցրած դիրքերի և այլնի մասին, որոնք իրականությանը չեն համապատասխանում… Դրանք խուճապ են տարածում ոչ միայն թիկունքում գտնվող մարդկանց մեջ, այլ հենց այդ դիրքերը պահող զինվորների շրջանում: Եվ նման դեպքերում ծնողները կարող են զանգահարել ու առաջնագծում կռվող իրենց որդուն հարցնել՝ տղա ջան, էս ո՞նց է՝ դու չես իջել, բա թերթերը գրում են, որ հանձնվել եք արդեն…

Այնպես որ՝ պետք է կարողանանք թափանցիկությունը մեկտեղել զսպվածության, պաշտպանվածության հետ… //

Ի՞նչ դերակատարություն կունենա ԵՄ դիտորդական առաքելությունը Սյունիքի անվտանգության ապահովման գործում, և արդյո՞ք կունենա

Սկիզբը՝ էջ 3

րապետության տարածքում տեղակայվել են եվրոպացի դիտորդներ, թե այլևս խնդիր չենք ունենալու թշնամական նկրտումներ ունեցող ադրբեջանական կոչվող արհեստածին հանրապետությունից:

Ուստի պետք է մեզ համար շատ կարևոր արձանագրում անենք՝ որևէ պարագայում չպետք է մեր հասարակությանը մոլորեցնենք խաղաղության մասին չափից դուրս մեծ ակնկալիքներով, որովհետև դա բթացնում է հանրության իմունիտետը, ինքնապաշտպանական հատկանիշները:

Իսկ եթե դառնանք կոնկրետ Սյունիքին, ապա բոլորի համար ակնհայտ է՝ այսօր աշխարհաքաղաքական շահերի կենտրոնական գոտիներից մեկը Հարավային Կովկասում հենց Սյունիքի մարզն է: Ուստիև՝ Սյունիքի մարզի կարևորությունը միայն Հայաստանի Հանրապետության համար նշանակալի չէ: Սյունիքի մարզը կարևոր է Ռուսաստանի Դաշնության համար, կարևոր է Իրանի Իսլամական Հանրապետության համար, կարևոր է թուրք-ադրբեջանական միասնական դաշինքի համար, կարևոր է նաև հավաքական Արևմուտքի համար:

Այնպես որ՝ նման աշխարհաքաղաքական կարևորության տարածքի անվտանգության ապահովումը, կրկնեմ, պետք է իրականացվի հենց Հայաստանի Հանրապետության կողմից, ինչպես մեր պետության մնացած բոլոր տարածքների անվտանգության ապահովումը: Դա է ոչ միայն տրամաբանականը, ոչ միայն պետական մոտեցումը, այլ նաև արժանապատիվ դիրքորոշումը: Եվ պետք է մեր հասարակությանը, մեր ժողովրդին հստակորեն բացատրենք՝ մենք ենք (առաջին հերթին), որ պարտավոր ենք ապահովել մեր հայրենիքի անվտանգությունը: Եվ դա, բնականաբար, պետք է անենք մեր դաշնակիցների ու գործընկերների օգնությամբ, այլ ոչ թե պետական այդ լրջագույն գործառույթը պատվիրակելով կամ վերապահելով նրանց:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Կառավարության սյունիքյան քաղաքականությունը թափանցիկության կարիք ունի

Սկիզբը՝ էջ 4

թական միջավայր է ստեղծվել կենտրոնի շնորհիվ: Երեխաներն այցելում են այնտեղ, իրականացվում են գյուղատնտեսական ծրագրեր՝ անասնապահություն, պանրագործություն, հողագործություն, երեխաների համար ակադեմիական կրթության դասընթացներ, որպեսզի կարողանան հետո բուհեր ընդունվել, նաև բուհերի ուսանողների կրթաթոշակային ծրագիր… Այսինքն՝ կենտրոնի շուրջ և կենտրոնի շնորհիվ ստեղծվել է հաճելի աուրա: Այդպիսի կենտրոններ ենք ունենալու նաև Գորիսում ու Կապանում: Դրանք մնայուն բաներ են, կայուն, տասնամյակներով աշխատող կառույցներ: Այլ ծրագրեր նույնպես կան Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող՝ նշված բյուջեի շրջանակում:

Կարծում եմ՝ հատկապես տեղական ու տարածքային իշխանությունները պետք է հավելյալ ջանքեր գործադրեն, որպեսզի մարդկանց մատչելի բացատրեն, թե ինչ է կառավարությունն անում իրենց համար և ինչպիսի միջոցներով՝ կլինեն Եվրոպական Միության միջոցներ, կլինեն պետական բյուջեի կամ համայնքային բյուջեի միջոցներ, մարդիկ պետք է իմանան՝ գումարները որտեղից են հատկացվում և ինչ նպատակով ու ոնց են ծախսվում…

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ
18 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 Թ.

Վերջիններիս էլ չի կարելի մեղադրել, այդքան գումարը չի փրկի, եթե Նռնաձորի անբարեկարգ ճանապարհի պատճառով մեքենան անսարքության մատնվի:

Ինչո՞վ էր ապրում և շնչում հակառակորդի անմիջական «հարևանությամբ» գյուղը 44-օրյա պատերազմի օրերին. **«Ոչ մեկը գյուղից դուրս չի եկել, – մանրամասնում է Ալեքսան Բոյաջյանը,- պատերազմի օրերին տղաները դիրքերում են եղել, կանայք նուռ էին հավաքում, հետամուտ լինում, որ բերքը չփչանա»:** Այնուամենայնիվ, գյուղը վնասներ կրել է, 14 ձի անցել է թշնամու կողմը. 2020 թ. նոյեմբերին տղաները դեռ չէին իջել դիրքերից, անասուններն անտեր էին մնացել: Բնակիչները դիմել են համայնքապետարան՝ փոխհատուցում ստանալու խնդրանքով:

Նաև հետաքրքրվեցինք, թե միջազգային կազմակերպությունների միջոցով ի՞նչ ծրագրեր է իրականացվել բնակավայրում: WW Բնության համաշխարհային հիմնադրամը դպրոցին հատկացրել է արևային մարտկոցներ, որոնց շնորհիվ մեծապես լուծվեց դպրոցի դասասենյակների ջեռուցման խնդիրը:

«IFAD»-ի (գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ) ծրագրով գյուղացիներին հատկացվել են արևային չորանոցներ: **«Դրանք փոքր բիզնես ծրագրեր են, որ բնակչությանը բավականին օգնում են»**, – մանրամասնում է Ալեքսան Բոյաջյանը: Իսկ սեփական ծրագրերից Նռնաձորի վարչական ղեկավարն առանձնացրեց խաղահրապարակի և հանդիսությունների սրահի կառուցումը: Առաջինի ֆինանսավորումը Մեղրիի համայնքապետարանն է իրականացնելու, իսկ երկրորդի դեպքում խնդիրը կքննարկվի, եթե հողհատկացում լինի, ավելի ստույգ՝ եթե կիսաբանդ կառույցն Արդարադատության նախարարության հաշվեկշռից հանեն և վերադարձնեն համայնքին:

Նախորդ անգամ՝ 2013 թվականի գարնանը, երբ դարձյալ աշխատանքային այցով Նռնաձորում էինք, համայնքապետարանի շենքի հարևանությամբ լքված և կիսաքանդ շենքեր կային, որ այժմ հողին էին հավասարացվել: Մեր զրուցակիցը բացատրեց, որ Մեղրիի զարգացման հիմնադրամը «Յունիբանկի» հետ համատեղ նախատեսում են բնակելի շենքեր կառուցել: Արդեն հինգ շահառու հաստատվել է, նախապատվությունը տրվել է երիտասարդ ընտանիքներին, որոնց բնակֆոնդը վատ վիճակում է…

Երբ հրաժեշտ էինք տալիս, վարչական ղեկավարը հուսադրող խոսք ասաց. **«Մենք այստեղ կմնանք, Նռնաձորը կշենացնենք, միայն ճանապարհի և խմելու ջրի հարցը լուծեն»:**

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
24.02.2023

Կարեն Դեմիրճյանը Նռնաձորի մատույցներում արգելափակել էր Զանգելանից ձգվող այս ճանապարհի կառուցումը...

1980-ականներն էին: Ադրբեջանի ղեկավար Հեյդար Ալիևը ձեռնարկեց Զանգելանից՝ Արաքսի ձախ ափով, մինչև Նախիջևանի Օրդուբադ ճանապարհային մայրուղու կառուցումը:

Ճանապարհը հասցվեց մինչև Մեղրու տարածաշրջանի Նռնաձոր գյուղի մատույցներ (լուսանկարում). հայոց հնամենի այդ գյուղին իրենք Նյուվադի էին անվանում: Եվ ճանապարհի կառուցումը շարունակություն պիտի ունենար...

Սակայն Հայաստանի արժանապատիվ ղեկավար Կարեն Դեմիրճյանն անթույլատրելի համարեց ճանապարհի կառուցումը Մեղրու տարածքով: Անգամ Մոսկվայի միջամտությունից հետո նա անդրդվելի մնաց: Եվ շինարարությունը, ինչպես տեսնում ենք, առայսօր կիսատ է:

Տվյալ տարածքով՝ Ադրբեջանի արևմտյան շրջանները Նախիջևանի հետ կապող ճանապարհի կառուցումը մինչ այդ անթույլատրելի էր համարել Հայաստանի ղեկավար Գրիգոր Հարությունյանը. պատկերացնել կարելի է, թե Ստալինի օրերում որքան քաջություն էր պետք՝ նման դիրքորոշում ունենալու և Հայաստանի շահերը պաշտպանելու համար:

Ադրբեջանի այդ մտադրությունը հետագայում ձախողել են Գրիգոր Հարությունյանին հաջորդած մեր մյուս ղեկավարները նույնպես՝ Սուրեն Թովմասյան (մեր հայրենակից), Յակով Ձարոբյան, Անտոն Քոչինյան և, իհարկե, Կարեն սքանչելի Դեմիրճյան:

Հայոց արժանապատվությանը տեր կանգնելու և Սյունիքի անվտանգությունը պաշտպանելու հերթը հասել է մեր սերնդին, տեսնենք...

//

Նռնաձորի դպրոցը, որ կրթադաստիարակչական արդյունավետ աշխատանքի օրինակ կարող է ծառայել

Սկիզբը՝ էջ 7

Տնօրենը հիշեց այն ժամանակները, երբ Մեղրու տարածաշրջանի գյուղերի մանկավարժների աշխատավարձը մյուս բնակավայրերի համեմատ 20 տոկոսով բարձր էր: Հետագայում դա վերացրին...

Ինչևէ, իրոք փառք ու պատիվ այն մանկավարժներին, ովքեր հեռավոր այս գյուղ են հասնում և կատարում իրենց մասնագիտական պարտքը... Այս համատեքստում ուրախացնողն այն է, որ նախկին երկու անգամի փոխարեն՝ այժմ շաբաթական չորս ուղերթ է կատարվում Մեղրիից դեպի Նռնաձոր: Դպրոցում հաճելի մաքրություն տեսանք, կահավորանքը պարզապես աչք է շոյում: Նաև համակարգչային սենյակն է կահավորված, միայն էլեկտրոնային գրատախտակն է պակասում... Կրթօջախում 19 աշակերտ է սովորում:

Այնպես ստացվեց, որ Նռնաձորի մասին առաջին նյութս գրել եմ 2003-ին, երկրորդը՝ 2013-ին և հիմա: Տասը տարվա պարբերականությամբ: Դրանցից տվյալներ քաղեցի աշակերտների թվաքանակի շարժի մասին, այսպես ուրեմն՝ 2003-ին դպրոցում 38 աշակերտ էր սովորում, որից տասը՝ նախադպրոցական խմբում, 2013-ին՝ 32, այժմ՝ ինչպես արդեն նշվեց, 19: Հետընթացն ակներև է՝ մանավանդ տխուր խոհեր հարուցող: Ոչ միայն թվաքանակն է նվազել, նաև տարեցտարի լավ սովորողների թիվն է պակասել: Նախորդ տարի շրջանավարտ չեն ունեցել, այս տարի կրթօջախին հրաժեշտ կտա մեկ աշակերտ:

Մտանք նաև դասարաններից մեկը. հասարակագիտության դասին երեք աշակերտ էր՝ մեկը՝ 10-րդ, երկուսը՝ 11-րդ դասարանցի: Նման բան միայն Սյունիքի դպրոցներում կհանդիպես:

Այս տարի առաջին դասարանցի չունեն: Տնօրենը հավելում է, որ նոր ուսումնական տարում երեք առաջին դասարանցի կունենան: Կրթօջախում դպրոցականների սակավությունը մեր զրուցակիցը շատ պատկերավոր ներկայացրեց. **«Այնքան աշակերտ չունենք, որ շախմատային օլիմպիադային թիմով հանդես գանք»:** Դպրոցն ունի կահավորված ճաշարան, իսկ տաք սնունդը ստացվում է Ագարակից. պայմանագիր ունեն «Մարիշոկ» կազմակերպության հետ:

Տեղեկացանք նաև, որ արևային մարտկոցներ են տեղադրված, որոնք կրթօջախին հատկացվել են WW Հայաստանի **«Ընձառյուծի պահպանությունը Հարավային Կովկասում»** ծրագրի շրջանակում՝ Մեղրիի համայնքի աջակցությամբ: Դրա շնորհիվ հիմնովին լուծվել է դասասենյակներում ջեռուցման հարցը:

Նռնաձոր համայնքի դպրոցի կահավորումը հովանավորել է իրանահայ բարերար Էլբիս Արզումանյանը՝ ի հիշատակ իր ամուսնու՝ Խաժակ Արզումանյանի:

Մեղրիի սահմանապահ Նռնաձոր գյուղի կրթօջախը բացօթյա մարզադաշտ ունի, որի բացման արարողությունը տեղի է ունեցել անցյալ տարի՝ մայիսի 11-ին, ծրագիրը կյանքի է կոչվել **«Յունիբանկի» ֆինանսավորմամբ, Մեղրիի զարգացման հիմնադրամի աջակցությամբ** (հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Արմեն Սաքապետոյան): Դրանով լուծվել է գյուղում մասսայական սպորտի զարգացման և մանուկների ժամանցի կազմակերպման հույժ կարևոր խնդիրը: Բայց և այնպես, անորոշ է մնում փակ մարզադահլիճ ունենալու խնդիրը: Ձմռանը մարմնակրթության դասերն անցկացվում են դպրոցի նիստերի դահլիճի մի մասում:

Մեր զրույցին մասնակցում էր Նռնաձորի վարչական ղեկավար Ալեքսան Բոյաջյանը. ով նույնպես մտահոգություն հայտնեց՝ կրթական գործին առնչվող. **«Սահմանապահ գյուղերին պիտի ուշադրություն դարձվի, մարդկանց գյուղին կապում է դպրոցը, եթե դպրոցը չեղավ, բոլորը դուրս են գալու այստեղից, ինչքան էլ ապրելու նպաստավոր պայմաններ լինեն, ընդհանուր առմամբ՝ պետական մակարդակով հոգածություն պետք է լինի գյուղերի հանդեպ, որովհետև գյուղերը դատարկվում են»:**

Դեռ խոսք կա, որ սեպտեմբերի 1-ից իրար մոտիկ գտնվող գյուղերի դպրոցները միավորվելու են: Փառք Աստծո, որ այդ հանգամանքը գոնե Նռնաձորի դպրոցին չի վերաբերելու...

Ամեն դեպքում հաճելի էր տեսնել, որ հեռավոր Նռնաձորում նման կրթօջախ ունենք, և այդ օջախի ղեկավարումը կրթական գործի նվիրյալի ձեռքերում է...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ադրբեջանը պարտավոր է ապահովել Լաչինի միջանցքով անխափան տեղաշարժը երկու ուղղությամբ

Սկիզբը՝ էջ 1

ապրանքների ներմուծումը, որի հետևանքով սննդի, դեղորայքի և այլ կյանք փրկող պարագաների պակասուրդ է առաջացել: Դատարանը գտնում է, որ վնասը կարող է անուղղելի համարվել, երբ համապատասխան անձինք հայտնվում են կյանքի և առողջության համար վտանգավոր հանգամանքներում:

Դատարանը հիշեցրեց՝ 2023 թվականի հունվարի 30-ին տեղի ունեցած դռնբաց նիստում Ադրբեջանի ներկայացուցիչը հաստատել է, որ իր կառավարությունը պարտավորվել է և շարունակում է պարտավորվել ձեռնարկել իրենից կախված բոլոր քայլերը՝ երաշխավորելու անձանց, տրանսպորտային միջոցների և բեռների ազատ տեղաշարժը Լաչինի միջանցքով՝ այդ թվում շարունակաբար աշխատելով ԿԽՄԿ-ի հետ:

Դատարանն ի գիտություն է ընդունում այդ հայտարարությունը: Սակայն դա չի վերացնում անուղղելի վնաս պատճառելու վերահաս ռիսկը՝ պայմանավորված Լաչինի միջանցքով տեղաշարժը խաթարմամբ: Վերոհիշյալ հանգամանքների լույսի ներքո դատարանը եզրակացնում է, որ դատարանի կողմից իրագործելի ճանաչված իրավունքների ենթադրյալ խաթարումը կարող է անուղղելի վնաս պատճառել իրավունքներին, և կա հրատապություն: Այսինքն՝ կա իրական կամ վերահաս և անհապաղ ռիսկ, որ կառաջանան անուղղելի վնասներ՝ նախքան դատարանի կողմից գործով վերջնական որոշում կայացնելը: Ուստի դատարանը եզրակացնում է, որ ժամանակավոր միջոցներ կիրառելու համար պայմաններն առկա են ու բավարարված, ուստի անհրաժեշտ է, որ դատարանը նախքան վերջնական որոշումը որոշ ժամանակավոր միջոցներ կիրառի, որպեսզի պաշտպանվեն Հայաստանի կողմից հայցվող դատարանի նշած իրավունքները: Դատարանը հիշատակում է, որ իրավունք ունի կանոնադրության համաձայն կիրառել այնպիսի միջոցներ, որոնք ամբողջովին կամ մասամբ տարբերվում են հայցվող միջոցներին:

«Դատարանն արձանագրում է, որ Ադրբեջանի նախագահի, Հայաստանի վարչապետի և ՌԴ նախագահի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը նախատեսում է, որ Լաչինի միջանցքը պետք է ապահովի կապ՝ ԼՂ-ի և ՀՀ-ի միջև և պետք է մնա ՌԴ խաղաղապահ ուժերի վերահսկողության ներքո: Հայտարարությամբ նաև նախատեսված է՝ Ադրբեջանը պարտավոր է երաշխավորել անձանց, տրանսպորտային միջոցների և բեռների անվտանգ տեղաշարժը Լաչինի միջանցքով՝ երկու ուղղությամբ: Սույն գործով հաշվի առնելով Հայաստանի կողմից հայցվող ժամանակավոր միջոցների բնույթը տվյալ գործի հանգամանքներում՝ դատարանը եզրակացնում է, որ կիրառվելիք միջոցները պարտադիր չէ, որ լինեն նույնը, ինչ հայցված միջոցները: Դատարանը եզրակացնում է, որ նախքան այս գործով վերջնական որոշման կայացումը Ադրբեջանը պարտավոր է իր՝ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների համաձայն՝ ձեռնարկել իրենից կախված բոլոր միջոցները, որպեսզի ապահովի անձանց, տրանսպորտային միջոցների և բեռների անխափան տեղաշարժը Լաչինի միջանցքով երկու ուղղությամբ», – ասվեց հայտարարությունում:

Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի կիրառման գործով Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի հայցի լսումները Հաագայի դատարանում տեղի էին ունեցել հունվարի 30-ին: //

Սյունյաց Երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:
«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց Երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1045, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 28.02.2023թ.: